բող և ստացվել հիբրիդային սերունդ։ Հայտնի յեն բույսերի այնպիսի սեր (genus, բօձ), վորոնց մոտ շատ հաճախ առաջ են գալիս միջտեսակալին հիբրիդներ, ալտպիսի սեռերի թվին պատկանում են *Verbascum*-ը, *Potentilla*-ն, *Salix*-ը, *Primula*-ն, *Geum*-ը, Այդպիսի հիբրիդներից շատերը բուրովին անպտուղ են (*Verbascum*) կամ համարյա թե անպտուղ են (*Potentilla reptans* × *Potentilla Tormentilla*)։ Կան և այնպիսիները, վորոնք պտուղ են տալիս և հետագա սերնդներում տալիս են հերձման խայտարդիտ պատկերներ։ Այդպիսի գեղքերում հաստատուն հիբրիդ կարող է առաջ գալ միայն շատ սակավ, վորովհետեւ գեների համալրատասխան զուգակցությունը կարող ենք մեզ պատկերացնել իրեն վերին ստորհճանիք բարդ յերկանդամանու (բինոմի) տարրաբաշխման անդամներից մեկը, առաջինանի շատ բարձր ցուցանիշով կամ զուգակցությունների համարյա անվերջ կարգի անդամներից մեկը։ Այդ գեղքում ել հիբրիդի պատղատվությունը և մայնությունը կարող է իրականանալ, յեթե զույգ շարքերի պրիմիպուրի կորիզը առաջ գտ: Յեթե մի վորուե տեղում, յերկու տեսակների արեալի ընդհանուր մասի մի վորուե կետում, առաջ զա այդպիսի հաջող զուգակցություն, վորը՝ ի վերջո տա նոր հոմոզիգոտ պտղաբեր ձեւ, — այն ժամանակ այդ ձեւը, բազմանալով և տարածվելով, մի քանի ժամանակից ձեռք կը բի լուր, սկզբում փոքրիկ, արեալը, և մորֆոլոգիական տեսակետից յուր յերկու ծնողներից ել բավականաչափ տարրեր լինելով, յերբ նրան սիստեմատիկները գտնեն, կնկարագրեն այն իրեն նոր տեսակ և իրավունք ունեն այդպիս անելու, վորովհետեւ այդ նոր ձեւը կունենա զբահամար բուլոր տվյալները — և մորֆոլոգիական ուրույն հատկանիշներ, իր սպեցիֆիկ հատկությունները ժառանգվելը և վորու արեալ: Իսկ յերբ սիստեմատիկը կասկածի, արդյոք սա հիբրիդ չե, և ցանկանա փորձնական անապահով այդ ձաւել, և կարծեցյալ ծնողներին արհեստական խաչաձև փոշուման յենթարկի, նա մեծ հաջողության քիչ շանս կունենա: Յեթե նույն իսկ տասնյակներով, հարյուրներով կատարի նա արհեստական խաչաձև փոշուում, գժվար թե այդանո՞ կատարվի գեների շատ պատահող հաջող զուգակցությունը, վորի հետևանքով տվյալ ձեւը առաջացել ե, և այն ժամանակ՝ սիստեմատիկը կհայտաբարի, վոր այդ բույսը բնական ձեւ ե, վոր նա հիբրիդ չե, այլ անկախ տառաջացած «մաքուր» տեսակ, վորովհետեւ նրա փորձը չըճշտեց այդ բույսի հիբրիդ լինելը: Իսկ բնությունը, կատարելով յուր եքսպերիմենտը միլիարդավոր անհամաների վրա միլիոնավոր քառակուսի կելումետրերի վրա, ունի ավելի մեծ շանս հաջողության, վորը ժամանակ առ ժամանակ առանձին գեղքերում և իրականանում ե:

Ի հարկի, արմատապես սխալ կլիներ, յեթե մեկը պնդեր, վոր բնության մեջ յեղած այն բոլոր տեսակները, վորոնք իրենց հատկանիշներով յերկու ուրիշ տեսակների մեջտեղն են բնուում, — բոլորը հիբրիդներ են: Բայց առանձին գեղքերում, ինչպիսի որինակ տվյալ դեղքում, յերբ զործ ունենք *Agropyrum cibircicum*-ի հետ, բազմաթիվ խոտարակի ցուցմունքները, բոլորը միասին վերցրած, համարյա նույնքան համոզեցուցիչ են, ինչպիս ուղղակի ապացուցը: Առանձնապես ուզում

և մարդ ալղակեռ բացատրել այն գեղաքերը, յերբ «միջանկալար տեսակը չունի յուր սեփական հստակ վորոշված արեալը, այլ բսնում ե տեղաբնակ, մորֆոլոգիապես նրան յերկու մոտ տեսակների ընդհանուր արեալի մակարդակի վրա»: *Andropodon caucasicus* Trin. տարածված ե առեղծվածային կերպով, — նա քիչ ե պատահում Սուլիումից մինչև Սընկլյան Անդրկովկաս, չնայելով վոր մորֆոլոգիական տեսակետից շատ մոտ և նույն չափով ուրիշ յերկրներում սպորատիկ տարածված տեսակներին (22): Յերբ հետազոտեցին նրա տարածված տեղերը, պարզվեց, վոր նա մի ժամանակ պատահում ե այնտեղ, վորտեղ միասին են բնակում *Andropogon Ischaemum* L. և *Sorghum halepense* Pers. (*Andropogon halepensis* Brot.) և մի շարք հատկանիշներով նրանց ազգակից ե: Նույնպիսի յենթադրություններ ե հարուցում *Rhamnus spathulaefolia*-ի մորֆոլոգիան և տարածումը, վորը հանդիսանում ե միջանկյալ տեսակ *Rhamnus Pallasii* և *Rh. cathartica*-ի L. մեջ: Առեղծվածային *Papaver desertorum*-ը Grosshw. լուրահատուկ պատճաճել տփիկով, վորը Հայաստանում միայն մի քանի տեղերում ե պատահում, յես միշտ տեսել եմ բաած խաշխաշի մի քանի ուրիշ տեսակների և *Roehmeria orientalis*-ի հետ, և այդ խաշխաշը չափանց նման և *Roehmeria*-ին և փաստորին իր բոլոր տվյալներով բարուից *Roehmeria* սեռին անցնող մի բույս ե: Այս բոլոր փաստերը կարիք ունեն ավելի մանրամասն հետազոտության, և, կարող ե պատահել, նրանցից շատերը պատկանեն նույն կարգի յերկույթներին, ինչպես վերև հիշված *Agropyrum*-ի գեղաքերը:

Քանի վոր չափազանց դժվար ե և քիչ հուսական, խաչաձև, փոշոտման միջոցով, փորձնական ճանապարհով, վերոհիշյալ հարցերը լուծելը, ցիտոլոգիական մեթոդը ամենակարճ և ուղիղ ճանապարհն ե վորոշելու համար, թե արդյոք ճիշտ ե այդ տեսակի ձևերի հիբրիդային բնույթը ունենալը թե վոչ: Յերբ ձեռնարկեն մանրակրկիտ ցիտոլոգիական հետազոտությունների, վորոնք պետք ե պարզեն, թե ինչպիսի ճիշտ հարարերություններ գոյություն ունեն թե սոմատիկ գիպլոիդ, թե հապլոիդ կորիզներում, ինչպիս հիբրիդայնության տեսակետից «կասկածելի» ձևերի մոտ, նույնպես և նրանց լենթագրական ծնողների մոտ, յերբ այդ աշխատասիրությունները կատարված կլինեն բավականաչափ ճիշտ և մանրամասնանկասկած, դրանք՝ ի վիճակի կլինեն տալ համոզեցուցիչ ապացույցներ այդպիսի «կասկածելի» ձևերի հիբրիդային ծագման թեր կամ դեմ:



Н. А. Троицкий

Материалы к познанию роли естественной гибридизации в эволюции растительного мира

(Краткое изложение доклада, сделанного на 1-й научной сессии Гос. Университета Армении 13 мая 1934 г.).

В восемнадцатом веке, в эпоху Линнея, когда научная систематика растений еще только возникала, межвидовой естественной гибридизации придавалось преувеличено большое значение, и несмотря на господствовавший в то время догмат постоянства видов, допускалась возможность последующего возникновения новых видов путем гибридизации. Это мнение высказывалось как самим Линнеем (6), так и его продолжателями.

Названия „hybridum“, „spurium“, „adulterinum“ в бинарной номенклатуре видов Линнея, Вильденова и других являются памятником этого взгляда на некоторые виды, по признакам своим промежуточные между двумя другими. Допускалась возможность гибридного возникновения таких промежуточных форм не только путем скрещивания двух близких видов,—но даже и различных родов, принадлежащих к различным семействам.

Однако дальнейшее более углубленное исследование этих предполагаемых гибридов не дало подтверждений такого взгляда на них. Попытки получить экспериментальным путем такие виды, как напр. *Trifolium hybridum* путем скрещивания *Trifolium pratense* с *Trifolium repens*—были безуспешны. Последующие за Линнеем поколения систематиков отказались от этого взгляда,—и в течение большей части XIX века как до Дарвина, так в значительной части и после Дарвина,—почти все ботаники, за немногими исключениями (3, 16, 28), не придавали значения гибридизации, как фактору формообразования в растительном мире.

В начале XX века наступает в взглядах на роль естественной гибридизации значительный перелом. В 1900 г. была извлечена из забвения работа Менделя, и с нею вопросы о наследовании признаков при гибридизации, ранее получавшие часто совершенно фантастическое толкование,—встали на точную, конкретную почву. Успехи школы Моргана, достигшей в изучении механики передачи наследственных признаков изумительнейших степеней детальности,—позволили исследователям быть более смелыми в объяснениях механизма возникновения новых константных форм гибридным путем. Вопрос о роли естественной гибридизации в природе подвергся новому пересмотру. Появился ряд работ, в которых исследователи

высказывались за значительную роль процессов гибридизации в общей эволюции растительного мира. Как это всегда бывает в подобных случаях, некоторые авторы впали в противоположную крайность, вплоть до толкования всего хода эволюции, как результата гибридизационных процессов (Лотси, [Lotsy] 7).

Теоретическая возможность получения нового вида путем скрещивания двух „старых“ в настоящее время вполне доказана и не подлежит сомнению: она подтверждается имеющимися многочисленными опытами и исследованиями. Многие исследователи с уверенностью приписывают гибридное происхождение многим известным в природе формам, особенно принадлежащим к полиморфным видам и родам. Такое мнение высказывают, например, Альмквист (Almqvist) о некоторых расах *Capsella Bursa pastoris* (1), Розен (Rosen) о *Erophila verna* (13), Лидфорс (Lidforss) и Пейтерсен (Peitersen) о видах *Rubus* (10). Естественной гибридизацией частично объясняют чрезвычайный полиморфизм—Клаусен (Clausen) в цикле форм *Viola tricolor* (2) и Остенфельд (Ostenfeld) у неапогамных видов *Hieracium* (9). М. А. Розанова (24) дает большую сводку работ на эту тему. Н. И. Кузнецов (19) высказывает предположение о гибридной природе некоторых кавказских видов *Primula* и Г. А. Левитский (10) тоже о некоторых видах *Pulmonaria*¹⁾.

В то же время другие авторы, экспериментируя в направлении искусственного скрещивания меж собою различных видов, вплоть до принадлежащих к различным родам, неоднократно получали в результате скрещивания постоянные по своим признакам формы. Из этих работ особенный интерес представляют те, в которых описываются весьма любопытные, правда, покамест еще немногочисленные случаи получения, путем скрещивания двух видов, константной формы, идентичной с третьим известным уже в природе видом. Таковы работы Герберт-Нильсона (Heribert-Nilsson), получившего „синтетическим“ путем, от скрещивания меж собою других видов,—существующие в природе в виде самостоятельных видов ивы *Salix laurina* и *S. cinerea* (4), а также Мюнцинга (Münzing), получившего константную форму, цитологически и генетически однородную с *Galeopsis Tetrahit*,—среди потомства гибрида *Galeopsis speciosa* × *Galeopsis pubescens* (8).

Своеобразным, очень интересным и неопровергимо логичным путем подходит к выяснению гибридной природы некоторых видов растений М. Г. Попов. В нескольких своих работах (22, 23) он,

1) Уже после моего доклада появилась статья Д. Костова, в которой он высказывает мнение о гибридном происхождении *Nicotiana Tabacum* и приводит многочисленные литературные данные о гибридной природе многих других видов растений (18).

анализируя географическое распространение некоторых видов растений в Средней Азии, приходит к заключению о гибридной природе некоторых из них на основании изучения, с одной стороны, их ареалов, а с другой—их морфологических признаков и обстановки их произрастания.

Мне в течение двадцатидвухлетней научно-ботанической работы неоднократно приходилось сталкиваться с фактами, чрезвычайно сходными с описываемыми М. Г. Поповым. Большая часть из них описана уже мною в различных моих работах (25, 26, 27). Таков обнаруженный мною еще в 1912 году случай совместного произрастания в природных условиях *Potentilla reptans*, Р. *Tomentilla* и Р. *procumbens*; последний вид, по свидетельству ряда авторов (12, 14), неотличим морфологически от естественных и искусственных гибридов между двумя первыми. Сходное явление представляет собою произрастание в Закавказье *Medicago hemicycla Grossh.*—вида, морфологически весьма сходного с гибридом *M. sativa* × *M. falcata* и ареалом своим как нельзя лучше подтверждающего теорию М. Г. Попова. Но наибольший интерес представляют собою найденные мною в 1926 г. в Гареджийской степи (Грузия) формы *Agropyrum*, морфологически неотличимые от неизвестного из этой области *A. sibiricum*, и попадающиеся в небольшом количестве среди группировки с преобладанием *A. cristatum* и *A. repens* (27). Обстановка их произрастания и морфологические признаки свидетельствуют о том, что они являются гибридами между двумя последними видами. Гибридная природа настоящего *A. sibiricum* находит некоторое подтверждение в данных цитологических исследований Пето (Peto) (11) и В. В. Глотова (15). Последняя работа, напечатанная в малоизвестном издании Барнаульской (Алтайской) опытной станции, прошла, повидимому, незамеченоцией цитологами, хотя она представляет чрезвычайный интерес. В. В. Глотов исследовал дикорастущие сибирские *A. repens*, *A. sibiricum* и *A. cristatum* и обнаружил у них следующие кариологические соотношения. Диплоидное ядро содержит у *A. repens* 28 хромозом, у *A. cristatum*—14 и у *A. sibiricum* 28. Морфологически хромозомы *A. repens*, при одинаковом методе фиксации и окраски, резко отличимы от хромозом *A. cristatum*. Из 28 хромозом *A. sibiricum*—14 морфологически сходны с хромозомами *A. repens*, а другие 14—с *A. cristatum*. В. В. Глотов делает отсюда вывод, что ядро *A. sibiricum* содержит диплоидный набор хромозом *A. cristatum* плюс гаплоидный *A. repens*. Он приводит кроме того данные измерения им хромозом. Средняя сумма длин хромозом *A. repens*=225,05 (суммированная длина изображений, полученных при помощи рисовального аппарата,

выраженная в миллиметрах), *A. cristatum*—203,5 и *A. sibiricum*—319,5. Если сравнить последнюю величину с тою же величиною для теоретического гибрида с диплоидным набором *A. cristatum* и гаплоидным *A. repens*, то получится почти полное совпадение—ничтожная разница 3,5 лежит в пределах ошибки опыта (203,50+
 $\frac{225,05}{2}$ =316,0). На основании этих данных В. В. Глотов высказывает убежденное суждение о гибридном происхождении *A. sibiricum*.

В 1933 году, на территории курорта Арзни в Армении, на каменистых склонах ущелья реки Занги, были снова обнаружены мною растения, морфологически идентичные с *A. sibiricum*. Растения эти по строению соцветий были двух типов—остистые, с несколько более широким колосом, и безостые с сильно сжатым колосом. Кроме того, некоторые из них несли опушение на чешуях. Эти растения распределялись в группировках, в состав которых входят в изобилии *A. cristatum*, *A. glaucum* (s. l.) и *A. trichophorum*, растущие совместно приблизительно в одинаковой степени обилия (по Друде—сор₁—сор₂). Морфологически голоколосые формы представляют по своим признакам переходы от *A. cristatum* к *A. glaucum*, а опущенные—от *A. cristatum* к *A. trichophorum*. В то же время они морфологически хорошо соответствуют различным формам *A. sibiricum*, описываемым П. Н. Константиновым (17). Исследование этих переходных форм показало их высокую стерильность—количество развитых семян составляло от 0,1% до 1% количества цветков. Немногочисленные семена показали тем не менее хорошую всхожесть и в лабораторных условиях, и высеванными в ящики. Все вышеуказанное говорит за гибридную природу этих переходных форм¹⁾.

A. repens в эти группировки не входит, так что гибридизация шла, несомненно, в направлении *A. cristatum*×*A. glaucum* и *A. cristatum*×*A. trichophorum*.

Если находка гибрида *A. repens*×*A. cristatum* в Гареджийской степи позволила мне в свое время высказать предположение о происхождении вида *A. sibiricum* путем естественной гибридизации, то находка в Арзни гибридов *A. cristatum* с другими видами, также идентичных с *A. sibiricum*,—еще более подтверждает это предположение и позволяет высказать мнение о возможной полифилетичности вида *A. sibiricum*. Все четыре предполагаемых его предка—*A. repens*, *A. glaucum*, *A.*

1) Найденные мною в Грузии гибридные формы *A. repens*×*cristatum* обозначаются мною как *A. neosibiricum* hybr. n., а армянские *A. glaucum*×*cristatum*—как *A. pseudosibiricum* hybr. n.

trichophorum и *A. cristatum* обильно распространены в пределах ареала *A. sibiricum* и нередко произрастают совместно, что делает их естественную гибридизацию вполне возможной.

Несомненно, подобные гибридные формы будут найдены еще и в других местах ареала *A. cristatum*¹⁾.

Таким образом, в последние годы постепенно накапляются факты, заставляющие предполагать, что *A. sibiricum*, вид резко очерченный морфологически, константный и имеющий вполне определенный ареал распространения, является по своему происхождению константным видом естественного гибридного происхождения. Насколько такое предположение является вероятным, и что необходимо для его окончательного подтверждения?

В природе, на миллионах квадратных километров ареалов видов, и в течение миллионов лет существования вида,—происходит постоянно множество перекрестных опылений между различными видами. Фактически—и ветер, и насекомые,—словом, все агенты опыления, совершают постоянные многочисленные „ противоестественные“ опыления. Нередко можно видеть пыльцу злака на рыльце зонтичного в степи, споры папоротника на рыльцах цветов различных растений в лесу. Конечно, все такого рода случаи опыления остаются безрезультатными. В случаях более близкого родства между опыляемым растением и опылителем возможно получение гибридного потомства. Известны роды, в которых межвидовые гибриды очень обильны: таковы роды *Verbascum*, *Potentilla*, *Salix*, *Primula*, *Geum*. Многие такие гибриды бесплодны вполне (*Verbascum*) или почти (*Potentilla reptans* × *Potentilla Tormentilla*); другие—плодущи, и дают в дальнейших поколениях пестрые картины расщепления. Получение константного гибрида в таких случаях может произойти лишь крайне редко, ибо соответственное сочетание ген можно представить себе, как один из членов разложения весьма сложного бинома, с очень большим показателем степени,—или как один из членов почти бесконечного ряда сочетаний. При этом полная плодовитость и константность гибрида может быть осуществлена в случае возникновения полиплоидного ядра четных порядков. Если где либо, в каком либо пункте общей части ареала двух видов произойдет такое счастливое сочетание, дающее в результате новую гомозиготную плодущую форму,—то форма эта, размножаясь и расселяясь, через некоторое время получит свой, сперва небольшой ареал, и являясь морфологически заметно отлич-

¹⁾ После моего доклада, в 1934 г., на южных предгорьях Алатау Ш. М. Агадабянном и В. Б. Массино было найдено в двух местах несколько экземпляров *Agropyrum* типа *sibiricum* среди занимающих большие площади группировок со значительным участием в них *A. cristatum*, *A. glaucum* и *A. trichophorum*.

ной от обоих родителей, будет обнаружившими ее систематиками с полным правом описана как новый вид, ибо все признаки для этого у этой формы на лицо: морфологическая обособленность, наследуемость специфических признаков и определенный ареал. Заподозрев гибридное происхождение этой формы и пожелав проверить его экспериментально, путем искусственного скрещивания предполагаемых родителей, систематик будет иметь очень малую вероятность успеха. Десятки, сотни, тысячи искусственных скрещиваний не повторят того редчайшего счастливого сочетания ген, в результате которого возникла данная форма,—и систематик заявит, что эта природная форма—не гибрид, а самостоятельно возникший „чистый“ вид, ибо эксперимент не подтвердил этого. А природа, совершая свой эксперимент с миллиардами особей на миллионах квадратных километров, имеет несравненно большие шансы на успех, который от времени до времени в единичных случаях осуществляется.

Конечно, было бы в корне неправильным утверждение, что все встречающиеся в природе виды, являющиеся по своим признакам промежуточными между двумя другими,—представляют собою гибриды. Но в отдельных случаях, как напр. в данном случае с *Agropyrum sibiricum*,—совокупность многочисленных косвенных подтверждений такого предположения представляется почти столь же убедительной, как прямое доказательство. Особенно напрашиваются на такое толкование те случаи, когда „промежуточный“ вид не имеет собственного резко выраженного ареала, а встречается кое-где на площади общего ареала двух морфологически близких к нему видов. *Andropogon caucasicus* Trin. имеет загадочное распространение, встречаясь изредка на пространстве от Сухума до Средней Азии, и будучи морфологически очень близким к столь же спорадически распространенным в других странах видам (22); изучение его распространения показывает, что он чаще всего попадается в местах совместного произрастания *Andropogon Ischaemum* L. и *Sorghum halepense* Pers. (= *Andropogon halepensis* Brot.), и по ряду признаков является средним между ними. На такие же предположения наводит морфология и распространение *Rhamnus spathulaefolia* F. et M., вида промежуточного между *Rh. Pallasi* F. et M. и *Rh. cathartica* L. Загадочный *Papaver desertorum* Grossh., с его своеобразной стручкообразной коробочкой в его немногих местонахождениях в Армении мне приходилось видеть всегда произрастающим совместно с несколькими другими видами мака и с *Roehmeria orientalis* Boiss., с которой он имеет поразительное сходство, представляя фактически по своим признакам переход от рода *Papaver* к роду *Roehmeria*. Все эти факты ждут более детальных исследований, и

возможно что многие из них окажутся принадлежащими к явлениям того же порядка, как и описанные выше случаи с *Agropyrum*.

При чрезвычайной затруднительности и малой надежности проверки экспериментальным путем при помощи искусственного скрещивания, наиболее прямым и правильным путем к разрешению вопроса о правильности предположения гибридной природы форм такого рода,—является цитологический метод. Детальные цитологические исследования, имеющие своею задачей выяснение точных соотношений между хромозомами как в соматических, диплоидных, так и в гаплоидных ядрах,—как у „подозрительных“ по гибридности форм, так и у предполагаемых родителей, проведенные достаточно точно и детально,—несомненно, смогут дать убедительное доказательство за или против гибридного происхождения таких „сомнительных“ форм.

Эривань, 1934.

Использованная литература.

1. Almquist E. Zur Artbildung in der freien Natur (Act. Horti Bergiani, IX, 1929).
2. Clausen J. Studies on the collective species *Viola tricolor* (Bot. Tidskr., 37, 1921—22).
3. Focke W. Die Pflanzenmischlinge. Ein Beitrag zur Biologie der Gewächse. 1881.
4. Heribert-Nilsson N. Ueber das Entstehen eines ganz cinerea-ähnlichen Typus aus dem Bastard *Salix viminalis* × *caprea* (Hereditas 15, 1931).
5. Lidforss B. Resumé der Arbeiten über *Rubus* (Zeitschr. f. Abst. u. Ver., 12, 1914).
6. Linnaeus. De plantis hybridis (Amoen. Ac. III, 1764).
7. Lotsy J. Evolution by means of hybridisation (Hague 1916).
8. Müntzing [A. Cyto-genetic investigations on synthetic *Galeopsis Tetrahit* (Hereditas, 16, 1932).
9. Ostenfeld C. Experiments on the origin of species in the genus *Hieracium* (New. Phytol. XI, 1912).
10. Petersen. Blackberries of New England. Genetic status of the plant. (Vt. Agr. Exp. St., Bull. 218, 1921).
11. Peto F. H. Cytological studies in the genus *Agropyron* (Canad. Journ. of Res. V, 3, 1930).
12. Reichenbach L. u. H. W. Deutschlands Flora, Bd. XXV, T. I, 1909—12.
13. Rosen F. Die Entstehung der elementaren Arten von *Erophila verna* (Beitr. z. Biol. d. Pfl., 10, 1911).
14. Wolf Th. Monographie der Gattung *Potentilla*. Stuttg. 1908.
15. Глотов В. В. Цитологические исследования некоторых представителей рода *Agropyrum* для выяснения их генезиса (Алтайская с.-хоз. оп. ст. Отчет отд. селекции за 1930 г. Барнаул, 1932).
16. Кернер А. Жизнь растений. Русский перевод, СПБ. 1900.
17. Константинов П. Н. Житвяк. Изд. «Нов. деревня». М. 1923.


18. Костов Д. Экспериментальное получение полиплоидных гибридов в роде *Nicotiana* и их значение (Природа, 8, 1934).
19. Кузнецова Н. И. Primulaceae in Fl. cauc. crit., IV, 4, 1906.
20. Левитский Г. А. *Pulmonaria mollissima* \times *officinalis* (Тр. Бот. Муз. Ак. Наук, II, 1905).
21. Левитский Г. А. О формах промежуточных между *Pulmonaria angustifolia* L. и *P. officinalis* L. (Тр. Бот. Сада Юр. Уп., IV, 1, 1903).
22. Липский В. И. Флора Кавказа. Дополнение I (Тр. Тифл. Бот. Сада т. VI, 1902).
23. Попов М. Г. *Phlomis Vavilovi* sp. n. и родственные ему виды (Бюлл. Ср.-Аз. Гос. Унив., 13, 1926).
24. Попов М. Г. Географо-морфологический метод систематики и гибридизационные процессы в природе (Тр. по пр. бот. XVII, 1, 1927).
25. Розанова М. А. Современные методы систематики растений. Л. 1930.
26. Троицкий Н. А. очерк растительности Гареджийской степи (Зап. научно-пр. отд. Тифл. Бот. Сада, 7, 1930).
27. Троицкий Н. А. К вопросу о роли гибридизации в процессе видообразования (Тр. по пр. бот., XIX, 2, 1928).
28. Троицкий Н. А. Из наблюдений над некоторыми растительными гибридами (Бот. журн. СССР, XVII, 2, 1932).
29. Шмальгаузен И. Ф. О растительных помесях. Наблюдения из Петербургской флоры. СПб. 1874.

ՅԵ. Գ. ՄՈՒԽԻՆԱ-ՏՐՈԻЦԿԱՅԱ

Հ. Ս. Խ. Հ. ԱԶԵՓԱՆԱՎԱՆԻ ՃՐՁԱՆԻ ԴԱՅՏԵՐՈՒՄ
ՏԱՐԱԾՎԱԾ ՄՈԼԱՆՈՏԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԵՐԸ

Ե. Г. МУХИНА-ТРОИЦКАЯ

МАТЕРИАЛЫ ПО ИССЛЕДОВАНИЮ СОРНОЙ РАСТИТЕЛЬНОСТИ ПОЛЕЙ СТЕПАННАВАНСКОГО РАЙОНА С. С. Р. АРМЕНИИ



Հ. Ս. Խ. Հ. ԱՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ
ԴԱՇՏԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՄԵԹՈԴՆԵՐԸ

Խորհրդային Հայաստանի Ստեղծագության վաշտերում տարածված մոլախոտերի հետազոտությունը կատարված է 1930 թվին, պրոֆեսոր Ն. Ա. Տրոիցկու նախաձեռնությամբ և նրա ղեկավարությամբ կազմված ու Հայաստանի Հողգողկոմատի Գիտա- Հետազոտական Վարչության հետ համաձայնեցրած ծրագրով։ Հետազոտության ինդիրներն ելին՝ պարզելու հիմնական յեղանակների պարզաբանումը։ Հետազոտվեցին շրջանի գրեթե բոլոր տեսակի հողասեփերի մոլախոտերը, ինչպես հացահատիկային դաշտերի, վուշի, կանեփի, արևածաղկի արտերի, նույնպես և ցեղուտատեղերի մոլախոտերը։ 1930 թվին շրջանի հողագործական բոլոր հողամասերը յես հետազոտեցի յերկու անգամ՝ նախ հացաբույսերի հասկակալման և ապա հատիկի հասունացման ժամանակ։ Խոկ Ստեփանավանի մերձակա դաշտերն ամառվա ընթացքում հետազոտվել են ավելի շատ անգամներ։

Աշխատանքի մեթոդիկան հետեւյալն եր. մոլախոտերով վարսկված դաշտերը քննելիս կազմվում ելին մոլախոտային բուսականության ցուցակներ, այդ ցուցակներում նշվում եր մոլախոտերի տեսակների կազմը, յուրաքանչյուր տեսակի զարգացման աստիճանը, շերտավորումն (քրսօնություն) ու տարածման չափը ըստ Ա. Ի. Մայլցեվի 4-բալային սիստեմի։ Մոլախոտերի բոլոր տեսակները հերբարացվում ելին, իսկ նրանցից գլխավորները՝ նաև իրենց զարգացման զանազան աստիճաններում։ Բատ վարակման բնույթի տիպեկ հացահատիկալին դաշտերում վերցվում ելին փորձնական հրապարակներ՝ մեկ քառ. մետր տարածությամբ (տվյալ դաշտի համար միջին վարակվածության տեղերում) և հաշվի առնվորմ արդ տարածության վրա բուսած ինչպես կուլտուրական բույսի ցողունները, այնպես ել բոլոր մոլախոտերինը, յուրաքանչյուր տեսակինը առանձնապես։ Բացի այդ, կատարվում եր հացահատիկի նմուշների անալիզ՝ մինչև նրանց մաքրելուց հետո¹⁾։

Այդ հետազոտությունը կատարվում եր Ստեփանավանի շրջանում գյուղացիանական ասպարիզում տեղի ունեցող բեկման միջոցին, յերբ կու-

¹⁾ Այդ նմուշները սերալիք կերպով մեզ հասցրեն գյուղատնտեր Գ. Ի. Բ. և Հ. Ա. յանն ու Ա. Մ. Մատությանը

տնտեսությունները զեռ նոր միայն սկսել եյին նկատելի դեր խաղալ շըրջանի տնտեսության մեջ: Ինչպես վիճակագրական տվյալներով ցուց ե արված հետագալում, 1930 թվին կոլտնտեսությունները շրջանում զեռ փոքրաթիվ եյին ու բավական թույլ, բավարար չափով չեյին սպասարկվում ազգութեանիկական տեսակետից ու իրենց դաշտերի կազմությամբ, ինչպես կերևա այդ մեր հետագա բացատրությունից, զրեթե չեյին տարրերովում մենատնտեսների տնտեսություններից: Հենց այդ տարվանից սկսվեց կոլտնտեսությունների բուռն աճն ու ամրապնդումը: Ցերկորդ հետազոտությունը, վոր անխուսափելիորեն պետք ե կատարել մի քանի տարի հետո, անշուշտ ցույց կտա կոլտնտեսությունների կուլտուրական ու ազգութեանիկական վերելքի արտացոլման աստիճանը իրենց դաշտերի դրության վրա: Խսկ ներկա հետազոտությունը հասկացողություն ե տալիս դաշտերի այն ցավալի դրության մասին, վոր մնացել ե վորպես ժառանգություն անզպան ու անտառեսավար անցյալից և, վորից յիշնելով, շրջանի կուեկտիվ անտեսություններն հարկադրված եյին կատաղի պայքար մղել այդ ժառանգության գեմ:

Հետազոտված շրջանը յես, բացի վերև հիշվածից, այցելեցի մի անգամ ևս 1932 թվին, վայրի գրությամբ աճող կերախոտերի սերմերի մասսիվ ները քննող գիտական արշավախմբի (եքսպերիցիա) աշխատանքների ժամանակ: Այդ տարին հատուկ հետազոտություններ չկատարվեցին, միայն վերստուգին ու լրացվեցին շրջանի մի քանի մասերում 1930 թվին կազմված բուլսերի ցուցակները:

Հետազոտման նյութերի մշակումը, վոր սկսված եր Յերևանի Անասնաբուժական-Զոոտեխնիկական ինստիտուտի բուսաբանական լաբորատորիայում, մեծ մասամբ կատարվեց ու վերջացվեց Հայաստանի Պետհամարանի բուսերի մորֆոլոգիալի ու սիստեմատիկայի լաբորատորիայում, վորպես Համալսարանին կից բիոլոգիական Դիտա-Հետազոտական ինստիտուտի բուսաբանական սեկտորի պլանային աշխատանք:

ՀԱՄԱՐԾՈՅ ՏՎՅԱԼՆԵՐ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփանավանի շրջանը գտնվում է Խորհրդային Հայաստանի հյուսիսարևելյան մասում և իր 134.435,02 հեկտար տարածությամբ¹⁾ բռնում ե այն լեռնային սարահարթը, վոր հայտնի յե լոռվա դաշտավայր անունով ու նրան կից շրջակա բարձունքների լանջերը: Այդ հարթավայրը միջին հաշվով ծովի մակերեսույթից 1300 — 1700 մետր բարձրություն ունի, մի փոքր թեքումով հյուսիս-արևելուտքից դեպի հարավ-արևելք: Նա շըրջափակված ե հարավից՝ Բգովդակի լեռնաշղթայով, արևմուտքից՝ Ազուեգանի և Դարախաչի լեռնաշղթաներով, արևելքից՝ Լալվար—Լեջանի լեռ-

¹⁾ Բոլոր տվյալները՝ հողամասերի չափերի, տուանձին կուլտուրաների տարածության, կուլտուրաների բերքատվության և գյուղատնտեսության կուեկտիվացման մասին, բերգում ևս Հայաստանի հողժողովատի հաշվամթն սեկտորի տվյալների համաձայն:

նաշղթայով և այսպես կոչված Սոմինեթի լեռների ճյուղավորումով։ Հյուսիսից հարթավայրը մի մասով, զառիթափ իջնում և գեղի Մաշավերի գետի հովիաբ, մի մասով, թեթև բարձրությամբ (պերեալով) միանում և Վրաստանի Բաշքեչստի շրջանի նախալեռնամասին։ Լոռվա հարթավայրը կտրված և Զորագետ (Կամենկա) գետով ու նրա վտակ Զիլգայով, նույնպես և մի քանի այլ առվակներով։ Գետերն, իրենց ընթացքի մեծ մասում, հոսում են գրեթե ուղղահայաց պատերի մեջ պարփակված խոր կիրճներով։

Լոռվա հարթավայրը կազմած է հրաբխային տեսակի—ձիթաքար (օլի-
վինովայի) բաղալտից, Հյուսիսային մասում նաև ծածկված և գետաքարի (գալեչնիկ) շերտով, վորն հարավային՝ մասում բանում և հողաշերտի անմիջական ստորին մասում ու տեղաբեկ դուրս գալիս մակերեսը։

Բազալտի մակերեսին կազմվող մերգելի (րոխլակովայ) հորիզոնի վրա (հոգմանարվող կեղեկի) կազմվում են մուգ, հումուսով հարուստ հողեր, վուրոնց Ս. Ս. Զախար ով գը դասում է լեռնային սևահողերի շաբքին (2). Դրանք ունեն հրաշալի հատիկա-կնձիկային ստրուկտուրա, սակայն հերկվելիս արագ կերպով ցըրի յեկող, մուգ, տեղաբեկ միանգամայն սև գույն, և պարունակում են միջին հաշըով $10-15^{\circ}$, իսկ առ առավելն 19° հումուս լեռների լանջին տարածված են զանազան տիպի լեռնամարգագետնային հողեր, Սևահողերի հզորությունն այդ հողերում շատ տարբեր և—մի քանի սանտիմետրից (համատարած բազալտի վրա) մինչև մի մետր և ել ավելի։ Ջյունը սովորաբար նստում է լողջ ձմեռը, բայց վայնքան խորը Ցերբեմն ել ձյունը շատ քիչ և լինում։

Լոռվա հարթավայրի կլիման (2, 6) զով ե—ամառն առանց տոթերի ու ձմեռ՝ բավական խիստ սառնամանիքներով։ Ստեղծամավանի տարեկան միջին ջերմաստիճանը $= +8,8^{\circ}$ C., ձմեռվա միջինը $= -9,4^{\circ}$ C. և ամառվանը $= +15,5^{\circ}$ C.: Սառնամանիքները յերեմն հասնում են -30° C-ից ել ավելի։ Ջյունը սովորաբար նստում է լողջ ձմեռը, բայց վայնքան խորը Ցերբեմն ել ձյունը շատ քիչ և լինում։

Խոնավությունը շրջանի զանազան մասերում միատեսակ չե։ Հարավի ու արեւելքն համեմատաբար ավելի չորային են, քան հյուսիսն ու արհմուտքը։ Ստեղծամավանում տարեկան տեղումներն հավասար են $550-580$ մ.մ. (6). Ստեղծանավանից գեղի հյուսիս ու արեւմուտք խոնավությունն ավելանում է, կալինինոյում տարեներ են լինում, յերբ մթնոլորտային տեղումներն հասնում են 800 մ.մ.-ի, իսկ Կարակալայում (ներկալիս ձիաբուժական խորհտնասություն), մինչև 1000 մ.մ.-ի։ Տարվա ամենախոնավ ժամանակը—գարունն ու ամառն ե, այնուհետև գալիս և համեմատաբար ավելի չորային շրջան, իսկ վրանից հետո—տեղումների ամենանվազ շրջանը—սեպտեմբերը և հոկտեմբերը ամիսներին։ Բավարար քամակությամբ մթնոլորտային տեղումները, վոչ այնքան բարձր չերմաստիճանի հետ միասին, ապահովում են առանց վուովման հողագործությունն այս շրջանում։

Այս շրջանի համար մեծ չարիք և հանգիստանում կարկուտը։ Առանձնապես հաճախ են տուժում կարկուտից շրջի հանարավ-արհելցան լեռնային

ու նախալեռնային մասերը և արևմուտքում՝ «Թագ լեռների» (Мокрые горы — Угловатан и Чаровица) ստորաները:

Խիստ կարկտահարություններ լինում են այստեղ գրեթե ամեն տարի, վորոնք մեծ ավերածություններ են պատճառում դաշտերին, Յերբեմ կարկուտից խիստ տուժում են նույն իսկ խոտաբաները:

Ստեփանավանի ջրջանի բուսականությունն այնքան ել բազմազան չեւ Անտառներն համեմատաբար քիչ են—մոտ 18.000 հեկտար: Անտառային հողամասերը կենտրոնացած են ջրջանի հարավային մասում, նովո-Պակրովկալից մինչև Գյառպյառ, իսկ հյուսիս-արևելքում՝ Պրիվոյլնի գյուղի մոտերքը: Անտառներն առավելապես կաղնիքովի յեն: վերին գոտում կան շատ հաճարենիներ,—լեռնային թղթիներ (бук и горн. клен) (Acer Trautvetteri Medu.), Գյառպյառ և Գյուլաքարակ գյուղերի մոտ կան սոճու (сосновые рощи) պուրակներ:

Հարթավայրը չվարած տեղերում ծածկված և խոտային բուսականությամբ և կազմված ե մասամբ լեռնային մարգագետիններից, մասամբ ել լեռնային տափաստաններից: Հրուսիսային մասում կան բավական մեծ ճահճային տարածություններ, լեռնալանջերին, նրանց ստորին մասերում, առանձնապես ջրջանի արևելյան մասում, գերակշռող և լեռնա-տափաստանային բուսականությունը, վորին, մըջին հաշվով 2000 մ.-ից, փոխարինում են յենթալպիական մարգագետինները: Ավելի բարձր, 2600—2700 մ.-ից սկսած—ընկած են ալպյան կարճախոս մարգագետիններ: 1930 թվին շրջանում հաշվում եյին 26.410 հեկտար խոտաբար (բնական), իսկ արոտավայրեր՝ 53.838 հեկտար:

Բնական բուսականությունն հարթավայրում պահպանվել ե զգալի չափով խամ հողերի վրա ջրջանի հյուսիսային ու արևմտյան մասում: Հարավին ու արևելքը մեծ մասամբ վարած ե: Սրտերը մեծ մասամբ տարածված են նախկին տափաստանների ու լեռնային մարգագետինների տեղերը, միայն ամենաբարձր վարելատեղերում (Լեջան, Ցաղցան և այլ գյուղերի դաշտերը) կոչելով յենթալպյան մարգագետինների գոտուն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Ստեփանավանի ջրջանի բնակչությունը, վոր կազմված և հալերից, ոռուսներից (մեծ մասամբ աղանդավոր մալականներից), թուրքերից ու աննշան քանակությամբ այլ ժողովուրդներից, գրեթե բոլորը, ներառյալ նաև ջրջանային կենտրոն Ստեփանավանը, պարապում են գյուղատնտեսությամբ, առավելապես կաթնատու անասնապահությամբ: Բարձրութակ կաթնային մթերքները (յուղ, պանիր) հանգիսանում են շրջանի գյուղատնտեսական գլխավոր արտադրանքը:

Ցանքի տարածությունները Ստեփանավանի շրջանում կենտրոնացած են գլխավորապես նրա արևելյան մասում, ուր դասավորված են նրանք յերկու մեծ մասսիներով՝ առաջինը բռնում և շրջանի հյուսիս-արևելյան ու մասամբ հյուսիսային մասը, տարածվելով Շահնազար գյուղից դեպի

արևելք ու հարավ-արևելք և ընդգրկում է Կալինինո (Նախկ. Վարանցով-կա), Նովո-Միխայլովկա, Սարչապես և Պրիվոլյնի գյուղերի մեջև ընկած ցանքի մեծ տարածությունները։ Յերկրորդ մասսիվը ձգվում է Պրիվոյլյնից դեպի հարավ, Հայդարբեկ, Ալեկսանդրովկա, Լեջան և մյուս գյուղերի գաշտերով, վոր ընկած են Լեջան-Լալվարի լեռնային մասսիվի յերկարությամբ։ Այս յերկրորդ մասսիվը շրջանի հարավ-արևելյալ մասում լայնանալով, ընդգրկում է Ստեփանավանի և Նիկոլայեվկա, Գյուլագարակ, Վարդարլուր, Ռուս և Հայ Գյանցառ ու մյուս գյուղերի գաշտերը։ Մասն, բաժան-ըստին հողամասեր կան շրջանի և հարավային մասում, ինչպես և արևմուտքում՝ կոռվա ու Ղարաղլալյայի անասնաբուծական խորհանակությունների տերիստրիալում։

Հայաստանի հողժողովածակ տվյալների համաձայն մեր հետազոտություն կատարած սարբն—1930 թվին, Ստեփանավանի շրջանի ցանքի վողջ տարածությունը հավասար եր 13.314 հեկտարի, վորից հացահատիկային՝ 10.616 հեկտար կամ ցանքի վողջ տարածության 79,7%⁰՝ 1932 թվին ընդհանուր ցանքի տարածությունն ավելացավ, հանելով մինչև 13.568 հեկտարի, իսկ հացահատիկայինը կրճատվեց մինչև 8.524 հեկտարի կամ ընդհանուր ցանքի տարածության մինչև 62,8 առկոսը—գլխավորապես կերակուտային կուլտուրաների զարգացման շնորհիվ, վորոնք 1930 թվին բնավ գոյութիւն չունեցին այդ շրջանում¹⁾։

1930 թվին շրջանում գերակուող կուլտուրան աշնանացան ցորենն եր, կամ ավելի ճիշտը՝ «Քյարտիկան» («սորյա»), այսինքն ցորենի և աշուրայի խառնուրդը։ Աշուրայի քանակը աշնանացանի մեջ, մեր հոտաղուության տվյալներով, տատանվում է 14,3%⁰-ից մինչև 66,4%⁰։ Հողժողովածակ տվյալների համաձայն Ստեփանավանի շրջանում 1930 թվին կար ընդամենը 3.707 հեկտար աշնանացան ցորեն։ բացի այդ, 261 հեկտար ցուցակագրված ե վորպես աշուրա։ Դա բայ յերեսույթին «Քյարտիկան» («սորյա») և աշուրայի գերիշուող խառնուրդով։ Աշնանացան ցորենն այս շրջանում իրենից ներկայացնում է փափուկ ցորենի զանազան տեսակների խառնուրդ, հազվագյուտ գեղքերում վորպես խառնուրդ պատահում են կարծը ցորեններ։ Աշուրան գլխավորապես հանգիսանում ե այստեղ Secale cereale-ի բազմակերպ գաշտային-մոլախոտային ձևերով։ Ամեն տարի ցանքերի հենց իր բերքից, այդ «Քյարտիկան» («սորյա»), այսինքն աշուրայի խառնուրդով վարակված ցորենը, Անդրկովկասում աստիճանաբար, տարից-տարի ավելացնում է աշուրայի քանակը խառնուրդի մեջ ի վեստ ցորենի։ Այս յերեսույթը, վոր Վրաստանի վերաբերմամբ նկարագրել ե Գ. Մ. Ժուկովսկին (1) ու մանրամասն հետազոտել Ն. Ա. Մայիսուրի աշնությամբ (7), շատ ցալտուն կերպով արտահայտված է Ստեփանավանի շրջանում։

Կերկում հիշված կերային կուլտուրաների տարածության ընդարձակում 1932 թվին, տեղի ունեցավ գլխավորապես աշնանացան «Քյարտիկ-

¹⁾ Մինչև վերջին տարիները Ստեփանավանի շրջանի գյուղատնտեսության հիմական ձյուղը կազմող անասնապահության կերային բազան հանդիսանում է եյլին բացառապես կոռավարակայի ու նբան շրջապատող լինելու բնական խոտհարքներն ու արտավայրերը։

յալի» (սորյա) կրծառման հաշվին, վոր նվազելով այդ թվին, հասավ մինչև 1629 հեկտարի:

Աշնանացան ցանքերն 1930 թվին հավասարաշափ տարածված երին շրջանի ցանքային վողջ տերիտորիայում: Սրեւըան լեռնային մասում, ուր գարնան ցանքերը լեջան լեռնան լանջերին հասնում են մինչև 2000 մետրից ել բարձր, —աշնանացանները 1700—1800 մետրից բարձր չեն գնում: Գարնանացան ցորենը 1930 թվին շրջանում հաշվում եր 1566 հեկտար: 1932 թվին այդ տարածությունն ավելանալով հասավ մինչև 1751 հեկտարի: Գարնանացան ցորենն այս շրջանում ներկայացնում է իրենից գլխավորպես ալլատեսակ *erythrospermum*, հազվագյուտ *ferrugineum*, *albidum*, *lutescens*, փափուկ *ցորենի*, յերբեմն ուրասկականի աննշան խառնուրդով: Երա ցանքերը, վոր տարածված են վողջ շրջանում, փոփում են լեռների վրա մի փոքր ավելի բարձր, քան աշնանացաններ, բայց նույնպես չեն հասնում հողագործության վերին սահմանին:

Գարին (*ինչպես չորեցարքը, այնպես ել յերկարքը*) բացառապես զարնանացան, տարածված ե ինչպես հարթավայրում, այնպես ել լեռներում, ըստ վորում յերկարք գարին տեղ-տեղ բարձրանում ե լեռներում 2000 մետրից ել բարձր: 1930 թվին կար 2169 հեկտար գարի, իսկ 1932 թ. 2381 հեկտար:

Վարսակը կենտրոնացած է գլխավորապես շրջանի հյուսիսային մասում և արևմուտքում՝ խորհանտեսային դաշտերում (1720 հեկտար 1932 թվին):

Ստեփանավանի շրջանի բնորոշ կուլտուրաներից ե նաև հաճար *Triticum dicoccum*, վոր այստեղ կոչվում ե „ուղաց“: Սրա ցանքերը, վոր տեղ-տեղ պատահում են նաև հարթավայրում, կենտրոնացած են գլխավորապես լեռնային մասում, հաճախ համեմուլտ հողագործության մինչև ամենաշերին սահմանին: 1930 թվին «հաճարի»-ի ցանքսը շրջանում հաշվում եր 1059 հեկտար, իսկ 1932 թվին—1043 հեկտար:

Շրջանի հարավ-արևմուտքում, մասնիք և կենտրոնական մասում, դիլիմարապես ոռւսական դյուկերի շրջակալիքում ցանում են արևածաղիկ, ձեծ մաստմբ «կրթվով» („ըրբություն“) և մասամբ ել „մեջեսմուկ“ տեսակի, վոր զործածվում ե առավելապես վորպես «սկմիչկա»: Տեղ-տեղ նրանից հանում են և ձեթ: Սրբածաղիկը սիլոսի համար 1930 թվին բոլորովին չեր ցանլած, 1932 թվին սիլոսային կուլտուրաները, գրեթե բացառապես արևածաղիկը, բռնել եր 993 հեկտար տարածություն:

Շրջանի հարավային ու արևելյան մասերում փոքր քանակությամբ մշակվում են կանեփ ու վուշ՝ ձեթի համար:

Բավական տարածված է կարտոֆիլի մշակությունը, վոր 1932 թվին բնում եր 1600 հեկտար տարածություն:

Մեր ծրագրը Հողժողկոմատի գիտահետազոտական վարչության հետ համաձայնեցնելիս, կարտոֆիլի հետազոտությունն հանվեց ծրագրից, ընդ վորում Հողժողկոմատը մտադիր եր կարտոֆիլի գաշահրի առանձին հաւտուկ հետազոտություն կատարել վորը, սակայն, դժբախտաբար մինչև այժմ չի կատարվել:

Մսացած կուլտուրաներից ցանքում են փոքր քանակությամբ յեգիկ-

տացորեն, կորեկ, ընդեղեններ (լրի և մասամբ ել բակլա): Գյուղերի շրջակալաքում ամեն տեղ կան բանջարանոցներ: Այդինք (խճորենու, սաւորենու, կեռասենու) կան զրիթե բացառապես շրջանի հարավ-արևելյան մասում (ընգամենը 37, 76 հեկտար):

1930 թվի տվյալներով ցեղուտատեղերն ու զանազան ժամանակվա հարսուները բռնում եյին 8000 հեկտար: Այսպիսով ուրիշն ուղարկած հողերը կազմում եյին վողջ վարելանողի¹⁾ մասը: Շրջանի բավական մեծ մասում հարուսներն ու ցիլուտատեղերը ոգտագործվում են վորպես արոտատեղիներ: Շրջանի հարավ-արևելյան մասում, ուր բնական խոտհարքները քիչ են, պառկած հողերը յերկար ժամանակով են թողնում և ոգտագործում են վորպես խոտհարք:

Շատ թե քիչ վորոշակի, հաստատուն ցանքափոխություն (բայց յեւադաշտից՝ մարդկանների անտեսություններում) 1930 թվին շրջանում գոյություն չուներ: Մեր հետազոտության անկետային տվյալներով, շրջանի զանազան մասերում ընտրովի փերցրած 26 գարնանացան դաշտերից 11 դեպքում գարնանացանին նախորդել եր նույն գարնանացանը, 8 դեպքում—զանազան ժամանակվա հարոս (1—5 տարի), 3 դեպքում—ցիլուտը կամ շատ հին հարոս, 2 դեպքում—աշնանացանը և 2 դեպքում—միջահերկ կուլտուրաններ (կարտոֆիլ): 7 աշնանացան դաշտերից 4 դեպքում աշնանացանին նախորդել ե հարոս, 2 դեպքում—նույն աշնանացանը և մի դեպքում—զարնանացանը: Մշակությների այլպիսի տարրեր հերթափոխություն նկատվում է ամեն տեղ: Այսպես, հողագործության յեղանակների կիրառման տեսակեաից համեմատարար ավելի կուլտուրական վարանցով (կա1) գյուղում 1930 թվին հայտնաբերված ե 2 դեպք, յերբ գարնանացանը ցանքած ե յեղել գարնանացանի վրա, 1 աշնանացանի և 1 միաշարքալին մշակութիւնի վրա:

Ազրոտեխնիկական յեղանակներն ես Ստեղծամավանի շրջանում, զուշ դացիական անտեսություններում, մինչև վերջին տարիները, յերբ կուլտիվացումն սկսեց զդալի գեր խաղալ—ներկայացնում եյին մի խայտարգետ պատկեր: Հաղի մշակումը կատարվում եր բազմատեսակ գործիքներով—սկսած կուլտուրական գութաններից՝ վարանցովլայնում և Ստեղծամավանում, մինչև զրեթե նախնական գործիքները—նախալեռնային փոքր զյուղերում: Մրա համապատասխան ել վարի խորությունը շատ բազման եւ Բաղմազան ե և վարի ժամանակը: 1930 թվին, հարցաթերթիկներով հավաքված տվյալների համաձայն, աշնանացան կուլտուրաների վարը կատարվում ե նրան նախորդող կուլտուրան հավաքելուց անմիջապես հետո—որոնտոսի կամ սեպտեմբերի վերջերին, վորից հետո անմիջապես կատարվում ե աշնանացանը: Յեթե ցանքը կատարվում ե հարոսի վրա, ապա վարը կատարվում ե ավելի վաղ—հուլիսին, մինչև իսկ հունիսին: Գարնանացան կուլտուրաների վարի ժամկետը նույնական կանաչան եւ Յերեկմն հերկում են նախորդ տարբա ողուտոս կամ սեպտեմբեր ամիսներին (առավելապես այն ժամանակ), յերբ գարնանացանը կատարվելու լի

1) Այժմ վերանցանվել ե Կալենինի:

հարսու կամ խամ հողի վրա), բայց քեզ չեն դեպքեր, յերբ ցանվելիք հողամասը ձմեռը մնում է առանց վարի և վարում են միայն ատրիլին—ցանքից անմիջապես առաջ: Գարնանացանների ամենահաճախ կրառավող ժամկետը ապրիլի յերկրորդ կեսն է, յերեմն ել մայիսի սկզբը: Յեղել են դեպքեր, վոր ցուցակագրվել են և ախնական գարնանացաններ, վոր ցանված են էեղել առանց հողը վարելու, այլ միայն փոցխելով, միջարքակին կարսողիլից հետո:

Փոքր գյուղերում, վորպես կանոն, ցանքը կատարում են շաղացան, մեծ գյուղերում շատ դեպքերում՝ պատահում և շարքացան—ձիու քաշող ուժով: Տրակտորը վորպես քաշող ուժ հողի մշակման ու ցանքի ժամանակ 1930 թվին կրառավում եր միայն ամենամեծ գյուղերում, այն ել փոքր քանակությամբ:

1930 թվին Ստեփանավանի շրջանում գյուղատնտեսության համայնացումը գեն թուլ եր զարգացած: Հացարույսերի բերքահավաքի ժամանակ, 1930 թվի սեպտեմբերի 1-ին, կոլեկտիվացված եր միայն 588 տնտեսություն, վոր կազմում եր 7,7 տոկոսը, կոլտնտեսություններին պատկանող 1914 հեկտար ընդհանուր վարելանողով, վորից 1965 հեկտար հացահատիկային և 1 հեկտար միայն կերախոտային: 1932 թվին կոլեկտիվացումն զգաւով չափով առաջ դնաց: — 1932 թվի սեպտեմբերի 1-ին այն հասավ 30,6 տոկոսի, 5,445 հեկտար վարելանողով, վորից 2589 հեկտարը հացահատիկային և 2139 հ. կերաբույսեր: Կոլեկտիվացումը, ագրոսոցնության ուժեղացումը, ՄՏԿայանների գործունեյության ուժեղացման շնորհիվ մերքհնակացման ընդարձակումը, տիպային ցանքափոխության հաստատումն ըստ շրջանների, վոր ուժի կերպով անց եր կացվում վերջին տարիներում, — զգալի չափով կանոնավորեցին հողագործությունը, վորն, ինչպես ցույց կտանք ստորև, շատ շուտ անդրադարձավ մշակույթների ըերթառվության բարձրացման վրա: Անշուշտ մոլախոտերի քանակը ևս պիտի նվազեր դաշտերում, նախկին տարինների համեմատությամբ:

Ստեփանավանի շրջանի հացահատիկային մշակույթների բերքատվությունը, վոր 1930 թվի տվյալներով, ընդհանուր առմամբ մոտ և վողջ չալաստանի միջին բերքատվությանը, հողժողկոմատի տվյալներով արտահայտվում է հետևյալ թվերով:

1930 թվի բերքը մի հեկտարից, ցհնաններներով	Աշնանացան ցործներներ	Գարնանացան ցործներներ	Գարնան ցործներներ	Դաշտակ ցործներներ	Համաց ցործներներ	Մաջնան ցործներներ
Ստեփանավանի շրջանում	.	8,6	6,6	9,2	11,2	7,6
Միջինը վողջ ՀԱՀ-ում	.	8,9	7,9	8,5	11,2	7,4

Ընդհանուր առմամբ բարձր չլինելով, բերքատվությունն հետագա տարիններին, ազդութելինիկական միջոցառությունների ու ցանքասարձանառության

կանոնավորման կապակցությամբ, սկսեց զգալի կերպով բարձրանալ: Այսպես, Հայաստանի համար սակալարեր 1932 թվին, յերբ վողջ Հայաստանի հացահատիկային մշակույթների բերքատվությունը միջին հաշվով 1 հեկտարից 5,0 ցենտներ էր, Ստեփանավանի շրջանում միջին բերքատվությունն հավասար էր 9,4 ցենտների:

Ստեփանավանի շրջանի բնական պայմանները, ազգուկանոնների կանոնավոր կիրառման, բնական տվյալների խելացի ոգտագործման և տեսակների ճիշտ ընտրության գեպքում, — բարենպաստ են: Հողը — լեռնային սեահող, բավականաչափ հնարավորություններ և տակս բարձր բերք ստանալու համար: Հայաստանի համար ամենալեռաշատ տարիներին, այստեղ խիստ յերաշտներ չեն լինում: Գարունը գալիս ե մի անգամից և այնուհետև ուշ ցրտերը, ինչպես 1933 թվին, — բավական հազվադեպ են:

Հողային հարստությունների անբավարար ոգտագործումն ու դաշտերի խիստ վարակումը մոլախոտերով, այն գլխավոր պատճառներն են հանդիսանում, վորոնց հետևանքով բերքատվությունն Ստեփանավանի շրջանում այնքան ել շատ ցածր չլինելով հանդերձ, այնուամենանիվ չի հասնում իր համար հնարավոր բարձրության: Շրջանի հողագործության ալդ թերությունների վերացման աշխատանքների հաջող ավարտումը, վոր սկըսված են արդեն, անշուշտ ավելի և ուժեղ կերպով պիտի բարձրացնի բերքատվությունը:

ՀՆԴՀԱԼՆՈՒԹԻՒ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՇՐՋԱՆԻ ՄՈԼԱԽՈՏԱՑԹԻՆ ԲՈՒԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփանավանի շրջանի մոլախոտային բուսականության կազմը չափանց բազմազան ե: Դաշտային մոլախոտերի մեծամասնությունը չեպատկանում առանձնահատուկ (սպեցիֆիկ) և սեգետալ տեսակներին:

Նրանցից շատերը մարգագետնային կամ անտառային բույսեր են, վոր հանդիսանում են ցանքը շրջապատող մարգագետնային, արոտային կամ անտառային բուսականության ներկայացուցիչները: Մոլախոտերի թվում շրջակա վհաչ մոլախոտային բուսականության ներկայացուցիչների առատությունը, — բազմամյաների, վոր ցանքի մեջ կենսական հատուկ հարմարություններ չունենալով հանդերձ, այնուամենանիվ քիչ քանակությամբ չեն ալսուել, — բացատրվում ե հետեւյալ հանգամանքներով: Առաջին՝ դրան նպաստում ե վատ, վհաչ բավարար խորությամբ հողի մշակումը: Ցերկրորդ՝ արտի համար հաճախ հերկվում են խամ հողեր, վորոնց վրա մասամբ մնում ե նախկին բուսականությունը: Ցերերորդ՝ այստեղ գոյություն ունեցող հողագործության սիստեմի պատճառով, նշանակալի դեր են խաղում ցեղուտները (պարա), վոր ծառայում են վորպես անասունների արածելու տեղ ու խոտարք: Հաճախ հողամասերը թողնում են վորպես արածելու համար՝ 5 ու յերբեմն ավելի տարիներ, վորի հեցելուտ հանգստանալու համար՝ 5 ու յերբեմն ավելի տարիների բուսականության ներկայացուցիչների զգալի մասը նորից տարածվաւմ են ու բնակվում այդ հողամասերում: Մարգագետնային ու տափաստանային բուսա-

կանության այլպիսի ներկայացուցիչներ. վոր տարածված են Ստեփանավանի շրջանի մոլախոտերի մեջ, հանգիսանում են հետեւյլ բույսերը՝ *Phleum pratense* h., *Trifolium pratense* l., *Onobrychis transcaucasica* Grossh., *Medicago hemicycla* Grossh., *Coronilla varia* l., *Jnula germanica* l., *Jnula cordata* Boiss և ուրիշ շատերը:

Մոլախոտերի քանակը չափաղանց մեծ է, ինչպես վարակման աստիճանի, այնպես ել տեսակների քանակության տեսակետից: Չնայելով, վոր տեղատեղ, ինչպես ցույց կտրվի հետազայում, զյուղացիք յեռանդուն պայմանագրում են մոլախոտերի գեմ, մինչև իսկ կիրառելով ձեռքի քարիչան, — այսուամենայնիվ, շատ գաշտերում մոլախոտերի քանակն հսկայական չափերի յի հասնում:

Դաշտավին մոլախոտերն Ստեփանավանի շրջանում հաշվում են մինչև 287 տեսակ: Ստեփանավանի շրջանում մշակվող կուլտուրաներից, մյուսների համեմատությամբ ավելի քիչ մոլախոտավոր են գարնանացան ցորենն ու հաճարը (ուղար), Դա բացարպակում են նրանով, վոր զյուղացիք այդ մշակույթների մոլախոտերն ավելի խնամքով են քաղճանում, քան մյուս մշակույթներինը: Բացառությունն են կազմում դժվար քաղճանվող հացաղզի մոլախոտերը պոչուկ, խրփուկ (օօցոյ) վորոմը (ույանի չլեց), վոր չափաղանց շատ են գարնանացան ցորենի ու հաճարի (ուղար) մեջ:

Մեծ քանակությամբ աշուրաբով վարակված աշնանացան ցորենը, վոր փաստորեն հանդիսանում ե «քյարտիկա», այսինքն ցորենի ու աշուրաբի խաւուրդ, տեղական զյուղացիների ասելով, տալիս ե վասորակ հաց և այնպիս չի գնահատվում, ինչպես գարնանացան ցորենը. այդ պատճառով ել գորնանացան ցորենն ավելի հոգատարությամբ են խնամում:

Մոլախոտերի քանակը քիչ ե նաև արեածաղկի մեջ: Սա միանգամայն հասկանալի լի, ինարկե, քանի վոր այդ մշակույթը հանդիսանում ե միջաների և կանոնավոր մշակման դեպքում, մոլախոտերը վոչնչանում են: Սակայն կանոնավոր խնամքի բացակառության դեպքում արևածաղիկն ել վարակվում ե մոլախոտերով:

Դաշտերի մոլախոտերով վարակման աստիճանը չափաղանց տարբեր եւ չաճախ համեմատաբար մոլախոտերով քիչ վարակված դաշտերի շարքում պատճառում են այնպիսի գաշտեր, վորոնց վրա կուլտուրական բույսը բոլորովին խեղդված ե մոլախոտերով: Տարբեր ե նաև զանազան տեսակների գերը—գաշտերի մոլախոտերով վարակման աստիճանի մեջ: Առանձին մոլախոտերի տարածման աստիճանի վերաբերմամբ կատարված հետազոտությունը ցույց տվեց, վոր շրջանում տարածված 237 տեսակ մոլախոտերից 4 բալի յեն հասնում, ըստ Մալցիկի չորս-բալան սիստեմի (գերակշռությը կուլտուրական ըուլսի նկատմամբ), — 13 տեսակ կամ 4,5 տոկոսը տեսակների լնդհանուր քանակից, իսկ 3 բալի (առատ համատարածում) — 40 տեսակներ կամ 14 տոկոսն ընդհանուր քանակի:

Ամենավայրագույն մոլախոտերը վոր յերբեմն բոլորովին խեղդում են ցանքը, այս շրջանում հետեւյալներն են՝ *Vicia villosa* Roth, — թափու վել *Vicia pannonica* Jacq v., — պանոնակի վել *Avena fatua* L. — պոչուկ, խրփուկ

և *Lolium temulentum* L.—վորում, գիմուկ կամ ինչպես այստեղ անվանում են «հարբեցնող հաց»:

Քիչ չեն գեղքեր, յերբ հացահատիկային ցանքերը քաղում են կանաչ կերի համար, այդ մոլախոտերով միանդամայն խեղդված լինելու պատճառով:

ԴԱՇՏԵՐԻ ՄՈԼԱԽՈՏԵՐՈՎ ՎԱՐՍԿՈՒՄՆ

ՀՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ (մշակույթների)

Աշնանացան ցորեն (քյարտիկլա—սորժա): Այս մշակույթի մեջ ցուցակադրած են ընդամենը մոլախոտերի 186 տեսակներ: Դրանից 38-ը կամ 20,4 տոկոսը հասնում են մինչև 3 բալի և 4 տեսակը (2,1 տոկոսը)—4 բալի: Միամյաները կազմում են՝ 45,6 տոկոս (85 տեսակ), յերկամյաներն ու բազմամյաները՝ 54,4 տոկոս (101 տեսակ):

Ամենատարածված մոլախոտերն հետեւյաներն են՝

1. *Githago segetum* Ds.:—արջնդեղ (կյոկոլ) — թունավոր մոլախոտ ե, ամենից հաճախ հանդիպում ե այս շրջանի հյուսիսային մասում (Շահնաղար, Նորաշեն, Ղղթիլսա գյուղերում): Իր տարածման աստիճանով նա ճաճախ հասնում է 3 բալի և ըստ բարձրության պատկանում է II հորիզոնին (յրս): Նրա սերմերը համբելիս մեկ կիլոգրամ հացահատիկի մեջ հասնում են ամենաշատը մինչև 11.240-ի, իսկ միջին թվով՝ մինչև 3160-ի: Համեմատույ հետո, այս բույսի սերմերն ընկնում են հացահատիկի մեջ, ընդ վորում նրա հասունացման ժամկետն համընկնում ե աշնանացան ցորենի հասունացման ժամկետի հետո:

2. *Vicia villosa* Roth.—թափու վիկ (мохнатая вика). Միամյա, սովորաբար աշնանային բույս ե: Իր տարածման աստիճանով բավական հաճախ հասնում է 4 բալի, ինչպես որինակ Շահնաղար, Նովա-Միխայլովկա, Աւութի, Լեջան, Գյուղագարակ, Վարդարլուր, Կուրթան գյուղերի դաշտերում: Այս շրջանի մնացած դաշտերում նա գրեթե ամեն տեղ հասնում է 3 բալի: Համեմատաբար շատ քիչ կարելի յե գտնել այնպիսի դաշտ, վոր վարակված չինի թափու վիկով: Թափու վիկը կարող է գրավել զանազան շերտեր (յրս)՝ սկսած յերբորդից՝ ցողունների տարածման ժամանակ, մինչև առաջին՝ լերը նա փաթթաթվում ե ցորենին մինչև վեր ու փոռում նրա հասկերի վրա փը ծաղկափթթաւնը: Խեղդելով ու գուրս քշելով կուլտուրական բույսին, թափու վիկը փաթթաթվում ե նրան իր գալարուն ցողուններով, պառկեցնում գետանին ու ացդախով դժվարացնում հունձը: Թափու վիկի սերմի առավելագույն քանակը մի կիլոգրամ հացահատիկի մեջ հասնում է մինչև 8140-ի, իսկ միջին քանակը՝ 1961-ի: Սերմերի այդ քանակն ինքնին վարակման շատ մեծ տոկոս կազմելով հանդերձ, այնուամենայնիվ շատ հետու յե վիկի սերմի այն հակայական քանակից, վոր մնում ե հացահատիկի մեջ դաշտերի խիստ վարակման դեպքում: Պարզ ե, վոր նրա սերմերի մեծ մասն ընկնում ե հողի մեջ:

Թափու վիկի ցողունների քանակը մեկ քառակուսի մետր տարածության վրա, միջակ վարակված դաշտերում, տատանվում է 95-ից

)Նովո-Միխայլովկա) մինչև 257 (Շահնազար), կուլտուրական բույսի համապատասխան 475 և 321 ցողունի:

3. *Vicia pannonica* Jacq.—սպիտակ կամ պաննոնալի վիկ: Միամյա, մեծ մասամբ աշնանային բույս եւ Շահնազար, Նովո-Միխայլովկա, Նորաշեն, Ռուս-Գյառջառ գյուղերում սրա տարածման աստիճանը մի քանի դաշտերում հասնում է մինչև 4 բալի, իսկ մնացած գյուղերում գրեթե ամենուրեք 3 բալի: Մեկ քառակուսի մետր տարածության վրա ցողունների քանակը հասնում է 112, յերբ կուլտուրական բույսի ցողունները 321 են (Շահնազար):

Մի կերպարամ հացահատիկի մեջ պաննոնայի վիկի քանակն հասնում է առ առավել 9610-ի, միջին թվով՝ 2629-ի:

4. *Convolvulus arvensis* L.—Դաշտավին պատառուկ (ՎԵՅՈՒԿ ՊՈԼԵՎՈՅ): Դժվար վոչնչացվող բազմամյա մոլախոտ եւ, բաղմանում եւ բուսական արմատային ընձյուղներով: Իր վորովող ցողուններով նա փաթաթվում է ցորենի ցողունին ու ձնում նրա հասկերը: Ցերեբրն ցորենի մի ցողունի վրա փաթաթված են լինում պատառուկի 3—5 ցողուն, իսկ յերբեմն ել ընդհակառակը—այդ մոլախոտի մի ցողունը փաթաթվում է ցորենի մի քանի ցողունների: Քամու ժամանակ ցողուններն փաթաթված պատառուկի ծանրությունից կուլտուրական բույսի ցողունները պառկում են գետնին. այդպիսով, պատառուկը խիստ կերպով պառկեցնում է կուլտուրական բույսը գետնին:

Պատառուկը շատ գեղքերում հասնում է տարածման 3 բալի: Շատ խիստ տարածված են առ Ռուս և Հայ Գյառույառ, Նիկոլայեվկա, Նովո-Միխայլովկա և Պրիվոյնի գյուղերում: Վորոշ գեղքերում ել հասնում է տարածման 4 բալ աստիճանի: Ցողունների միջին թիվը մեկ քառակուսի մետր տարածության վրա հասնում է յերբեմն 275-ի, յերբ կուլտուրական բույսի ցողունների թիվը լինում է 475 (Նովո-Միխայլովկա):

Ծաղկափթթումը շատ յերկարատև ե—հունիսի սկզբից մինչև հուլիսի վերջերը: Նրա սերմերի մեծ մասը թափվում է գետին, սակայն ուշ հասնողներն այնուամենացնիվ վարակում են հացահատիկը: Ստեփանավանի շրջանում 1 կերպարամ հացահատիկի մեջ պատառուկի սերմերի քանակն առ առավել 770 և լինում, իսկ միջին թվով՝ 109:

5. *Galium Aparine* L.—կազչուն կաթնիսոս (ԱՅԵԿԱՅ ՊՈԴՄԱՐԵՆՆԻԿ): Միամյա բույս ե, առանձնապես մեծ քանակությամբ պատահում է Շահնազար, Նորաշեն, Սարչապետ, Ալեքսանդրովկա, Ստեփանավան, Նիկոլայեվկա և Գյուլագարակ գյուղերի դաշտերում, ուր նրա տարածման աստիճանն հասնում է 3 բալի:

Այս մոլախոտն իր ծաղկափթթումն սկսում է ցորենի ծաղկափթթումից շատ առաջ (հունիսի սկզբներին) և վերջացնում է միայն հուլիսի վերջերին, այնպես վոր նրա սերմերի մեծ մասը թափվում է գետին, սակայն, այնուամենացնիվ հացահատիկը խիստ վարակվում է նրանով: Նրա սերմերի առավելագույն քանակը մի կիլոգրամ հացահատիկի մեջ հասնում է մինչև 860-ի, իսկ միջին թվով՝ 475-ի: Հարթավայր շրջաններում շատ առաջ ե սրա ցեղակից մի ուրիշ կաթնիսոս—*Galium tricorne* With., վոր

Ստեփանավանի շրջանում համեմատաբար հաղվագեպ ե: Քիչ քանակությամբ պատճում ե նաև Հայ և Ռուս Գյառողյառ, Գյուլաղարակ, Աջան և Յաղան գյուղերի դաշտերում:

6. *Salvia verticillata* L.—Յեղիսպակ (Шалфей мутовчатый).—Բաղմամյա բույս ե, խիստ աճում ե արմատացին ընձյուղներով: Նրա տարածման աստիճանն հասնում ե 3 բալի, իսկ Հայ Գյառողյառ և Յաղան գյուղերի մի քանի դաշտերում—մինչև իսկ 4 բալի: Տարածումն համաչափ չե, ավելի առատ ե շրջանի հարավային մասում:

Առավելագույն քանակը մի կիլոգրամ հացահատիկի մեջ հավասար ե 1550-ի, իսկ միջին քանակը 290-ի:

7. *Scleranthus annuus* L.—Միամյա բույս ե, ծաղկում ե ամառվա առաջի կեսին: Շատ կարծ հասակ ունենալով գրավում է III հորիզոնը, ուստի և նրա սերմերը բոլորովին չեն ընկնում հացահատիկի մեջ: Տարածման աստիճանն հասնում ե 3 բալի: Տարածված ե հավասարաշափ վողջ շրջանում: Գարնանին իր ծիկերով խիստ ծածկելով գետինը, նա չորային յեղանակին բոլորովին չորացնում ե հողն ու դրանով առաջացնում հացարույսի նոսրացում: Ցողունների քանակը մեկ քառակուսի մետրի վրա առանձին գեպերում հասնում ե 727-ի, յերբ կուլտուրական բույսի ցողունները հազիկ 475 են լինում:

8. *Rhynchoscorys orientalis* Benth.—Միամյա բույս ե, կիսապարագիտային: Խիստ տարածված ե մի քանի գյուղերի դաշտերում, ինչպես որինակ՝ Պրիվոյլնի, Ռուս Գյառողյառ: Այստեղ մի քանի դաշտերում նրա տարածման աստիճանն հասնում ե մինչև 4 բալի, իսկ մեծ մասամբ՝ 3 բալի: Շրջանի մյուս մասերում զգալի գեր չի խաղում:

Բացի վերեկում թվարկված բույսերից, գեր բաժական մոլախոտեր կան, վորոնց տարածման աստիճանն աշնանացան ցորենի մեջ հասնում ե 3 բալի: Այլպիսի բուկսեր են հետեւյալները:

Bromus japonicus Thunb., *Avena fatua* L., *Agropyrum repens* P. B., *Lolium temulentum* L., *Lolium persicum* Boiss. et Hoh., *Polygonum peratum* M. B., *Polygonum Convolvulus* L., *Melandrium Boissieri* Shishk., *Brassica Sinapistrum* Boiss., *Thlaspi Huetii* Boiss., *Sisymbrium Loeselii* L., *Vicia sativa* L., *Pisum arvense* L., *Geranium columbinum* L., *Geranium dissectum* L., *Scandix Pecten Veneris* L., *Caucalis daucoides* L., *Lithospermum arvense* L., *Sideritis montana* L., *Galeopsis Ladanum* L., *Galeopsis Tetrahit* L., *Mentha silvestris* L. s. l., *Veronica Tournefortii* Gmel., *Alectorolophus major* Rehb., *Asperula arvensis* L., *Campanula rapunculoides* L., *Carduus acanthoides* L., *Cirsium incanum* Fisch.

Գարնանացան ցորենի մոլախոտերի քանակն հասնում ե 142 տեսակի, ընդ վորում միամյաներ ցուցակագրված են 68 տեսակ կամ 48 տոկոս, յերկամյա ե բաղմամյա 74 տեսակ, կամ 52 տոկոս:

Համեմատաբար ավելի տարածված մոլախոտեր, վորոնց տարածման աստիճանն հասնում ե 3 բալի (15 տեսակ) և 4 բալի (2 տեսակ), հետեւյալներն են:

1. *Lolium temulentum* L.—վորում, դժում (պլեւը, ույանի չաօք). Մի-

ամբա, տիպիկ սեղեսաւ թունավոր մոլախոտ եւ Տարածված և վողջ շրջանում, բայց առանձնապես շատ և նորաշեն, Նղեփիլիսա, Մարչապետ, Փոքր-Ղարաքիլիսա գյուղերի դաշտերում: Տարածման աստիճանը 3 բալի յետավառք: Այս մոլախոտի սերմերը մեծ մասամբ ընկնում են հացահատիկի մեջ ու մասամբ միայն թափում հողը: Մի կիլոգրամ գարնանացան ցորենի մեջ նրա սերմերի քանակն հասնում և առառավել 27210 (!)-ի, իսկ միջին հաշվով՝ 9453-ի:

Վոչ մի մոլախոտ Ստեփանավանի ջրջանում այնպես հակայական չափով չի վարակում գարնանացան կուլտուրաները, ինչպես *Lolium temulentum*-ը:

2. *Lolium persicum* Boiss. et. Hoh.—Պարսկական վորոմ (պլևել պեսկայ): Նույնպես խիստ տարածված մոլախոտ եւ Տարածման աստիճանն հասնում և 3 բալի: Սերմերը, վոր թունավորման տեսակետից կասկածելի յեն, թափում են առավելապես հացահատիկի մեջ:

Սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ հացահատիկի մեջ հասնում և մինչև 4360-ի, իսկ միջին թվով՝ 691-ի:

3. *Galium Aparine* L.—պօմարենիկ լեպկայ—կաթնասու: Տարածված և զբիթի այնպես, ինչպես աշնանացան ցորենի մեջ:

4. *Avena fatua* L.—օվսյուր-պոչուկ, լորփուկ. Գարնանացան բուլսերին ամենաշատ վնասող մոլախոտերց մեկն եւ: Գարնանացան ցորենի մեջ, յերեկ քաղանի շնորհիկ, նրա տարածման աստիճանը շատ քիչ և պատահում վոր հասնի 4 բալի (*Նիկոլայեվկա գյուղը*), իսկ 3 բալը սովորական և ամենուրեք: Ծաղկումն սկսվում է հունիսի սկզբներին, սերմերի մեծ մասը թափում և գետնին և վոչ հացահատիկի մեջ: Սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ գարնանացան ցորենի մեջ հասնում է 720-ի, իսկ միջինը՝ 164-ի:

5. *Githago segetum* Desf.—արջնղեղ—(կյոկոլ):—Համեմատած աշնանացան ցորենի հետ, գարնանացանի մեջ զգալի չափով քիչ և տարածված: Վորոշ գիշքերում տարածման աստիճանն հասնում և 3 բալի: Տարածված է գիմափորապես շրջանի հունիսային մասում:

Մեկ կիլոգրամ հացահատիկի մեջ արջնղեղի սերմերի առավելագույն քանակն հասնում և մինչև 930-ի, իսկ միջին քանակը՝ 80-ի:

Բացի այս բույսերից, գարնանացան ցորենի մեջ իրենց տարածման աստիճանով 3 բալի լին հասնում նաև հետեւալները՝ *Polygonum Convolvulus* L., *Lepidium campestre* R. Br., *Thlaspi Huetii* Boiss., *Melilotus officinalis* Desf., *Vicia sativa* L., *Vicia villosa* Roth., *Geranium columbinum* L., *Caucalis daucoides* L., *Lycopsis orientalis* W., *Lithospermum arvense* L., *Sideritis montana* L., *Galeopsis Tetrahit* L., *Salvia verticillata* L., *Cirsium incanum* Fisch.

Հաճար—ինչպես վերեկում հիշված եւ, Ճ հաճարը գլխավորապես ցանվում է լեռնային շերտում, սակայն նրա ցանդիպում են և լոռվա հարթավայրում (*Նորաշեն*, Մարչապետ, Փոքր Ղարաքիլիսա, Գյուլագարակ, Գյառագյառ):

Դ-ի հաճարի մեջ հաշվված են 62 տեսակ մոլախոտերը, Նրանցից միամյաներ 36 տեսակ և բազմամյաներ 26։ Մոլախոտերի անսակների սակավությունն այստեղ բացատրվում է նրանով, վոր առաջին՝ հաճարի ցանքերի տարածությունը համեմատաբար քիչ է այստեղ և յերկրորդ՝ գլուզերի մեծ մասում ինսամքով են քաղհանում ալդ ցանքերը։

Համեմատաբար ուշաբըսության արժանի մոլախոտերը հետեւյաներն են

1. *Vicia villosa* Roth.—թափոտ վիկ (մօխետա վիկ).—Տարածման աստիճանն հասնում է 3 բալի, իսկ լեռնային շերտի մի քանի դաշտերում (Յաղդան, Լեջան, Ազարակ գյուղերում)՝ 4 բալի։

Դ-ի հաճարի լեռնային ցանքսերում, վորոնք Յաղդան, Լեջան և այլ գյուղերում հասնում են մինչև 2000 մետր բարձրության ծովի մակերեսութից, թափոտ վիկը խիստ տարածված լինելով հանդերձ, այնուամենայնիվ բնավ չի հասնում այնպիսի ուժեղ զարգացման, ինչպես հարթավայրի՝ աշնանացան ցորենի ցանքերում և իր հասակի ու բուսաբանական այլ հատկանիշների բնույթով, գդալի կերպով տարբերվում է հարթավայրի վիկից։ Ըստ յերեսույթին այստեղ նա պատկանում է ուրիշ և այն ել գարնանային տեսակի։ Թափոտ վիկի, վորպես մոլախոտի, խիստ տարածումը հողագործության վերին սահմաններում Սանկանավանի շրջանում հազարեակ յերեսույթ եւ։

Թափոտ վիկի գրեթե բոլոր սերմերը հաճարի լեռնային ցանքերում զգալի կերպով վաղ են հասնում, քան կուլտուրական ըույսը և հնձի ժամանակ գրեթե բոլորն աղջեն թափված են լինում գետնին։ Այսպես 1930 թվի ոգոսատոսի սկզբներին, յերբ հաճարի հատիկները գեռ նոր եյին կաթնային հասունության հասել և մասամբ միայն մոմային հասունության հասել, *Vicia villosa* (թափոտ վիկի) սերմերն արգեն լիրիվ հասունացել եյին ու մի մասն ել թափվել։

2. *Avena fatua* L.—օւսիօց, խրիուկ, պոչուկ։ Սրա տարածման աստիճանն այստեղ ել նույնն ե, ինչ վոր զարնանացան ցորենի մեջ, այսինքն հասնում ե մինչև 3 բալի, սակայն այս մոլախոտի սերմերն զգալի չափով ավելի շատ են թափվում Դ հաճարի հատիկների մեջ, քան զարնանացան ցորենի։ Այսպես, սրա սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ հաճարի մեջ հասնում է մինչև 5710-ի (Սարչապետ գյուղ), իսկ միջին քանակը՝ 3378-ի։ Այսպիսի մեծ վարակում նկատվում է զվարակուակն էռովա հարթավայրի ցանքերում։ Լեռնային շրջաններում խրփուկի (պոչուկի) հասունացման ժամկեան, ինչպես և յուս մոլախոտերից շատերինը, զգալի չափով տարբերվում է հատիկների հասունացման ժամկեան միակ սերմերը համեմատաբար քիչ են թափվում կուլտուրական բույսի հատիկների մեջ։

Դ-ի հաճարի լեռնային գոտու ցանքերում, Յաղդան, Լեջան, Ազարակ, Ռուս Գյառպյառ, Հայ Գյառպյառ, Փաքը Ղարաքիլսա գլուզերի գաշտերում խրփուկը (պոչուկը) ներկայանում է լուրահատուկ ձևով—Ան. *fatua* L., var. *basifixa* Malz., վորը նկարագրված ե Ա. Ի. Մայլցեվի կողմից (8, 9) վորպես հատկապես աշորան վարակող մոլախոտ։ Խրփուկի այս այլատեսակը վորոշվում է իր չբաժանվող համեմատաբար քիչ են թափվում կուլտուրական բույսի հատիկների մեջ։

սերմերն ընկնում են աշորավի հատիկների մեջ յերկ-յերկու միացած։ Այս հանգամանքը նրան իր հատիկի մեծությամբ շատ մոտեցնում է աշորայի հատիկին, այդ պատճառով ել գժվար և նրան աշորայից ջոկելը։ Իր չբացվող հասկիկներով այս տեսակն հիշեցնում է հարավային խրիուկին Avena Ludoviciana Dur.—վոր բնորոշ, և Անդրկովկասի ցածրադիր գոտիների համար։ Ստեփանավանի շրջանում դրանից չկա։

3. *Lolium temulentum* L.—վորոտ-գժակ (ույանի չլեց)։ Տարածված և ավելի քիչ, քան գարնանացան ցորենի մեջ (տարածման աստիճանը 2-3)։ Մեկ կիլոգրամ հատիկի մեջ նրա սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ է համարի մեջ համանում է 2580-ի (Գյուղագրակակ), միջին քանակը՝ 948-ի։

4. *Salvia verticillata* L.—շեղիսպակ (շալֆեյ մուտօչակ)։ Տարածման աստիճանը, առանձին գեղքերում 2-3, ինչպես որինակ Սարչապետ գյուղում նրա սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ հատիկի մեջ համանում է 990-ի, իսկ միջին քանակը՝ 320-ի։

5. *Vicia sativa* L.—ցանովի վիկ (վիկա պոչեանա). Տարածման աստիճանը լեռնային շերտում—2-3, ցածրադիր մասում ավելի հաճախ համանում է 3-ի։ Սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ հատիկի մեջ համանում է 1999-ի (Գյուղագրակ գյուղ), միջին քանակը՝ 424-ի։ Ավելի քիչ տարածված լինելով, քան վիկի վերաբերյալ հիշված յերկու տեսակները, ցանովի վիկն Ստեփանավանի շրջանում այնքան ել վնասատու մոլախոտ չե, ինչպես այլ ցեղի մյուս տեսակները։

Բնորոշ ե, վոր այդ մոլախոտն այստեղ լեռներին մոտ բարձրադիր գաշտերում նվազում ե, մինչդեռ այլ վայրերում հաճախ հակառակն է նկատվում։ քանի բարձրադիր են ցանքսերի գաշտերը, այնքան խիստ ե հացահատիկների վարակումը այդ մոլախոտով։

6. *Brassica campestris* L. (ըրակ), ցածրադիր շերտում (Լոռվա հարթավայրում) տարածման աստիճանն համանում է 3 բալի։

Այս մոլախոտի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ հատիկի մեջ համանում է մինչև 1320-ի (Նորաշեն գյուղ), իսկ միջին քանակը՝ 424-ի։ Լեռնային շերտում շատ հազվադեպ ե։

7. *Galeopsis Ladanum* L.—փայտատամիկ (պիկուլինկ)։ Տարածման աստիճանը մինչև 3։ Առավելագույն քանակը մեկ կիլոգրամ հատիկի մեջ՝ 900 (Փոքր Ղարաբիլսա գյուղ), միջին քանակը՝ 283։

Գարի։ Գարու մշակույթը (բացառապես գարնանացան) տարածված և վողջ շրջանում և լեռներում համանում է մինչև հողագործության վերին սահմանագիծը։ Հանդիսանում է բոլոր կուլտուրաներից ամենախիստ վարակվածը մոլախոտերով, թե վարակման աստիճանի տեսակիցից և թե ըստ մոլախոտերի տեսակների քանակության։ Գարու մեջ ցուցակագրված են 217 տեսակ մոլախոտեր (շրջանում տարածված գաշտային մոլախոտերի 75 տոկոսից ավելին), նրանցից՝ միամյաներ 96, իսկ բաղմամյաներ 119։ Տարածման 3 բալի համանում են 25 տեսակներ, իսկ 4 բալի՝ 4 տեսակներ։

1. *Avena fatua* L. Պոչուկ, խրիուկ—օւսօց. խիստ տարածված և գարու մեջ և այն ել հավասարաչափ վողջ շրջանում։ 4 բալի խրիուկի հա-

ճար հազվագեղաց չեղ գարու դաշտերում: Նորաշեն, Պրիվոյլնի, Նիկոլայիվկա գյուղերի գաշտերում 1930 թվին, գարնանացան գարու ցանքսերի մեջ մաս-ութ քաղցեց վորպես անառակեր, խրփուկով միտնագամայն խեղդված լինելու պատճառով: Զանազան գաշտերում, նայած ցանքի ժամկետին և, ըստ յերեսութիւն, գարու տեսակին, հացանատիկի մեջ թափում և զանազան քանակությամբ խրփուկ: Յերբեմն գաշտերը խրփուկով խիստ վարակված լինելու դեպքում, հացանատիկի մեջ գրեթե խրփուկ չի պատճառում, ընդ վորում նրա սերմերի մեծ մասը բերքահավաքի ժամկետին թափված են լինում արգեն: Առավելագույն չափով վարակված լինելու դեպքում խրփուկի քանակը մի կիլոգրամ գարու մեջ հասնում է 5710-ի (Նովո-Միխայլովկա գյուղ), միջին քանակը՝ 1472-ի:

2. *Lolium temulentum* L.—Վորում—(պահանջ խլեց). Այս մոլախոտն ամենից շատ տարածված և գարու մեջ նորաշեն, Ղղլքիլիսա, Սարչապետ, Փոքր Ղարաքիլիսա գյուղերի գաշտերում: Այստեղ շատ ցանքերում վորումի տարածման աստիճանն հասնում է 4 բալի: Նրա սերմերը, հասունանալով մինչև հացանատիկի բերքահավաքը, մասամբ թափվում են գետին, բայց մեծ մասն այնուամենայնիվ ընկնում և հացանատիկի մեջ:

Վորումի առավելագույն քանակը մի կիլոգրամ գարու մեջ հասնում է հսկայական թվի՝ 12.388 (Ղղլքիլիսա գյուղ), իսկ միջին քանակը՝ 3436-ի:

3. *Vicia sativa* L.—վիկա ոսեանացի վիկ: Գարու մեջ զգալի չափով ավելի շատ և տարածված, քան ուրիշ կուլտուրաների մեջ: Նրա սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ գարու մեջ հասնում է 4200-ի, իսկ միջինը՝ 731-ի:

4. *Lolium persicum* Boiss. et. Hoh.—պլեւը պերսիդսկի—Պարսկական գորում: Նախորդ մոլախոտի նմանը ամենից շատ տարածված և գարու մեջ: Սերմերի մեծ մասը թափվում և հացանատիկի մեջ: Մեկ կիլոգրամ գարու մեջ նրա սերմերի առավելագույն քանակն հասնում է 3260-ի, իսկ միջին քանակը՝ 651-ի: Ամենից մեծ քանակությամբ պարսկական վորումը պատճառում է Նովո-Միխայլովկա և Նիկոլայիվկա գյուղերի գաշտերում:

5. *Gypsophila elegans* M. B.—կաչիմ—խիստ տարածված և ամբողջ շրջանում, հաճախ հասնում է 3 բալի, իսկ Ստեփանավանի և Նիկոլայիվկա, Նորաշեն, Նովո-Միխայլովկա գյուղերի մի քանի գաշտերում նույն իսկ 4 բալի: Հատիկի մեջ գրեթե չի ընկնում:

6. *Galium Aparine* L.—ոճմարենիկ պեկուն կաթնախոտ: Տարածման աստիճանը 3 բալի է նաև հասնում՝ Նիկոլայիվկա, Նորաշեն, Սարչապետ Պրիվոյլնոյի և Ստեփանավանի գաշտերում: Շրջանի մնացած մասերում ավելի քիչ և տարածված: Առավելագույն քանակը մի կիլոգրամ հատիկի մեջ 1500-ի, միջինը՝ 294:

7. *Brassica campestris* L.—ընակ—գարու միջից այս մոլախոտի սերմի մեծ մասը թափվում է գետին: 1930 թվի հուլիսի սկզբներին, հացի բերքահավաքից գեռ շատ առաջ, նրա սերմերի զգալի մասն արգեն կատարելապես հասունացած եր ու թափվում եր: Զնայելով սրան, այնուամենայնիվ մի կիլոգրամի մեջ նրա սերմերի առավելագույն քանակը հասնում է 2250-ի, իսկ միջին քանակը՝ 261-ի:

8. *Brassica Sinapistrum* Boiss.—полевая горчица.—գաշտային մանաւներ: Գարու մեջ շատ հաճախ հասնում է 3 բալի: Ծաղկում և շատ յերկար—սկսած հունիսի սկզբներից մինչև ողուսոս: Սերմերի մեծ մասը թափվում և հողի մեջ բայց այնուամենանիվ, խիստ վարակման դեպքում, բավականաչափ ընկնում են և հացահատիկի մեջ: Այսպես, գաշտային մաների սերմերի առավելագույն քանակը մի կիլոգրամ գարու մեջ հասնում է 6870-ի (նորաշեն գյուղ), իսկ միջին քանակը՝ 1095-ի:

9. *Convolvulus arvensis* L.—вьюнок полевой—գաշտային պատառուկ: Շրջանի մի քանի գյուղերում հասնում է 3 բալի, մոտավորապես հավասարչափ ամբողջ շրջանում:

10. *Salvia verticillata* L.—шалфей мутовчатый—յեղիսպրակ: Տարածված և գարու մեջ ամենուրեք, տարածման աստիճանն հաճախ հասնում է 3 բալի: Սերմերի քանակը մի կիլոգրամ գարու մեջ հասնում է 1330-ի (նորաշեն գյուղ): Այժին քանակը մի կիլոգրամի մեջ հավասար է 216-ի: Մինչև գարու բերքահավաքը սերմերի մեծ մասը թափվում է հողի մեջ:

11. *Galeopsis Ladanum* L.—пижульник—փայտատամիկ: Շատ թե քիչ հավասարչափ տարածված և վողջ շրջանում, հասնելով տարածման 2—3 բալի: Պրիվլյանի գյուղի գաշտերում 1930 թվականին փայտատամիկը մի քանի հողամասերում, հասնելով 4 բալի, խեղդեց գարին: Առավելագույն քանակը մի կիլոգրամ գարու մեջ հասնում է 900-ի (Գյուղագարակ գյուղ), իսկ միջին քանակը՝ 154-ի: Փայտատամիկի ցողունների քանակը գարու դաշտերում, միջին վարակման դեպքում, մեկ քառակուսի մետր տարածության վրա հասնում է 175-ի, յերբ կուլտուրական բույսի ցողուններն 559-են լինում, իսկ խիստ վարակման դեպքում, ինչպես և այս բույսի մի ուրիշ տեսակը,—G. *Tetrahit* L.—սուրբին շերտն համատարած կերպով ծածկված ելինում նրա ցողուններով: Բարձրահասակ չլինելով, այս բույսը շերը շեն ձնչում ցանքսն իրենց մասսայով և դրա համար ել, նույնիսկ առատ տարածված լինելով հանգերձ, քիչ են նկատելի հացարույցի մեջ:

Բացի վերևում թվարկված մոլախոտերից, գարու մեջ իրենց տարածման աստիճանով 3 բալի ցին հասնում հետեւյալ բույսերի՝ *Bromus japonicus* Thunbg., *Polygonum Persicaria* L., *Arenaria serpyllifolia* L., *Scleranthus annuus* L., *Sisymbrium Loeselii* L., *Capsella bursa pastoris* Moench, *Melilotus officinalis* Desf., *Vicia pannonica* Jacq., *Symphytum aspernum* Sims., *Sideritis montana* L., *Galeopsis Tetrahit* L., *Veronica Tournefortii* Gmel., *Valerianella* sp., *Cirsium incanum* Fisch., *Cirsium Cosmelii* Fisch., *Leontodon hispidus* (L.) Boiss.

Վարսակ—(овес): Վարսակի մեջ մոլախոտերի տեսակներն հաշվում են 101. Նրանցից բազմամյա՝ 38, իսկ միամյա՝ 63: Տարածման 3 բալի հասնում են 13 տեսակներ, իսկ 4 բալի—2 տեսակ: Վարսակի մեջ տարածված պլաստիկ մոլախոտերն հետեւյաներն են:

1. *Avena fatua* L.—օցօց—խրփուկ: Բոլոր կուլտուրաներից (մշակութներից) վարսակն ամենից խիստ և վարակվում խրփուկով և վարսակը վարակող մոլախոտերից խրփուկն ամենից շատ տարածվածն եւ: Այս քանին նպաստում և այն հանգամանքը, վոր վարսակի բերքահավաքի

ժամկետը համապատասխանում է խրփուկի սերմերի ամենաառատ հասունացման ժամկետին, և նրա հատիկները խրփուկի սերմերից շատ քիչ են տարբերվում: Խրփուկի սերմերի տարածման 4 բալը վարսակի գաշտերում բնավ հաղվագեպ չե: Այսպիսի գաշտեր, վորոնց խրփուկով վարսակման աստիճանը բնորոշվի 3-ից պակաս բալով,—համեմատաբար քիչ են, վարսակի մեջ անհամեմատ ավելի մեծ տոկոսով խրփուկի սերմեր են թափվում, քան վորոնե այլ կուտառւրայի մեջ: Մրանով ե բացատրվում վարսակի հսկայական չափով վարսակած լինելը խրփուկով: Խրփուկի սերմերի առավելագույն քանակը մի կիլոգրամ վարսակի մեջ հավասար է 8040-ի (Վարանցովկա գյուղ), իսկ միջին քանակը վողջ շրջանի համար—3832-ի:

2. *Lolium temulentum* L.—պյանի խլեբ—վորոն: Տարածման աստիճանն ամեն տեղ զբաթե հավասարաշափ ե, ամեն տեղ հասնում է 3 բալի: Առավելագույն քանակը մեկ կիլոգրամ վարսակի մեջ հասնում է 3410-ի (Սարչապետ գյուղ), իսկ միջին քանակը՝ 814-ի:

3. *Lolium persicum* Boiss. ex Hoh.—պլևել պերսիական վորոն: Տարածված է վողջ համաշափ, հարմարված լինելով առավելագես հյուսիսային շրջանին, բայց այնտեղ, ուր պատահում ե, վարսակում և վարսակի գաշտերն ավելի ուժեղ կիրառվ, քան նախորդ մոլախութ: Այս կապակցությամբ, ունենալով ավելի քիչ, քան *Lolium temulentum*-ի համար միջին քանակության սերմեր մի կիլոգրամ վարսակի մեջ, առավելագույն քանակն, ընդհակառակ ավելի յի (առավելագույն՝ 4530, միջինը՝ 1352):

4. *Salvia verticillata* L.—ալֆեյ մոտօչատի—ողակաձև լեղիսպրակ: Տարածված է հավասարաշափ, հասնելով 2—3 բալի, սերմերի առավելագույն քանակը մեկ կիլոգրամ վարսակի մեջ—820 (Վարանցովկա գյուղ) և միջինը՝ 217:

5. *Veronica Tonrnefortii* Gmel.—Ցածրահասակ քրույս ե, գրավում է III շերտը: Ամենուրեք հասնում է 3 բալի, իսկ յերբեմն նույնիսկ 4 բալի: Վերջին զետքում իր պարկող համատարած լնձյուղներով բռնում և վողջ հողը: Նովո-Միխայլովկայի գաշտերից մեկում մեկ քառ. մետր տարածության վրա *Veronica Tonrnefortii* 1035 ցողուն կար, մինչդեռ վարսակի ցողունները նույն տարածության վրա 652 ելին:

Բացի վերևում հրշվածներից, վարսակի մեջ իրենց տարածման աստիճանով 3 բալի յեն հասնում՝ *Polygonum Persicaria* L., *Polygonum Convolvulus* L., *Scleranthus annuus* L., *Delphinium hybridum* L., *Lygia passerina* Fas., *Gypsophila elegans* MB., *Caucalis daucoides* L., *Galeopsis Tetrahit* L., *Convolvulus arvensis* L., *Gallium Aparine* L.

Արևածագիկ: Միջահերկ մշակույթ ե, բայց չնայելով դրան, նրա մեջ լինում են 62 տեսակ մոլախուեր, վորոնցից 30-ը բազմամյա, իսկ 32-ը միամյա: Տարածման 3 և 4 բալ ունեցող մոլախուերն են միայն միամյա և *Convolvulus arvensis*—գաշտային պատասխուկը:

1. *Avena fatua* L.—օվօցից—խրփուկի Տարածման աստիճանը վասարինած գաշտերում հասնում է 3 բալի, իսկ յերբեմն նույն իսկ 4 բալի:

2. *Lolium persicum* Boiss. et Hoh.—пшевел персидский—պարսկական վորում: Տարածման աստիճանը՝ 3. պատահում և ամենուրեք:

3. *Brassica Sinapistrum* Boiss.—полевая горчица—դաշտային մանամեխ: Տարածման աստիճանը՝ 3, տեղատեղ նույնիսկ 4: Տարածված և համաչափ:

4. *Polygonum Persicaria* L.—Արևածաղկի սպեցիֆիկ (հատուկ) մոլախում և Ստեփանավանի շրջանում: Տարածված և ամենուրեք: Շատ դաշտերում տարածման աստիճանն հասնում է 4 բալի, իսկ սովորականը՝ 3-ի: Վաս քաղհանի գեպքում արևածաղկի մեջ կազմում է համատարած յերկրորդ շերտը: (Լոռվա խորհանտեսության ցանքերը):

5. *Myosotis heteropoda* Trautv.—Խիստ վարակում և արևածաղկի բույր ցանքերը: Տարածման աստիճանն հասնում է 3 և յերեխն ել 4 բալի:

Մնացած մոլախուրերը նույնն են, ինչ վոր հացահատիկային դաշտերինը, միայն տարածման աստիճանն այստեղ զգալի չափով ցածր և (2 բալից վոր չափելի):

Վ. ուշաւ Ցանվում և (Ճյուղավորվող ցողուններով) գանգուրավոր վուշը (լեռ կոճրայ) (ձեթի համար), վորը տալիս և գնչ բարձր վորակի թելերու նրա մշակույթը տարածված և միայն մի քանի գյուղերում, այն ել փոքր հողամասերում: Մոլախուրերի տեսակների կազմով վուշի մշակույթը շատ աղքատ և: Համեմատարար վնասատու, վուշի ցանքը նեղող մոլախուրերին են պատկանում:

Cuscuta planiflora Ten.—повилика—դաղձ: Միամյա պարազիտ բույս և: Պատահում և վուշի զրեթե բոլոր դաշտերում և հասնում և տարածման 3 բալի, իսկ մի քանի ցանքերում նույն իսկ 4 բալի:

Բացի գաղձից, վուշի ցանքերում տարածված են՝ *Setaria viridis* P. B., *Brassica Sinapistrum* Boiss., *Convolvulus arvensis* L., *Galium Aparine* L., *Salvia verticillata* L., *Chaerophyllum bulbosum* L.

Կանեփ (коноопля): Կանեփի մշակումն, ինչպես և վուշինը, քիչ և տարածված Ստեփանավանի շրջանում: Կանեփի մեջ համեմատարար շատ տարածված մոլախուրերին պատկանում են՝

Agropyrum repens P. B., *Scleranthus annuus* L., *Gypsophila elegans* MB., *Sisymbrium Loeselii* L., *Salvia verticillata* L., *Echium vulgare* L., *Galium Aparine* L. *Carduus hamulosus* Ehrh.

Կանեփի բարձր ցողունների խիստ աճը աննպաստ պայման և հանդիսանում մոլախուրերի աճման համար, այդ պատճառով ել կանեփի դաշտերի վարակումը մոլախուրերով, մյուս մշակույթների համեմատառությամբ, բավական թույլ եւ:

Ցելեր ու հարուներ (пары и перелоги): Ստեփանավանի շրջանում կիրառվում են ինչպես սե, այնպես ել կանաչ ցելեր. վերջիններն ավելի շատ են տարածված:

Դաշտը թողումն են հանդիսանալու զանազան ժամկետներով—յերեխն մեկ տարով, յերեխն 2-3 տարով, իսկ յերեխն ել ավելի յերկար ժամանակով: Վերջինը նկատելի յի մեջ մասսամբ շրջանի հարավային ու հարավ-արեւադան մասերում, ուր քիչ են բնական խոտհարքներն և վորտեղ խոտակազմելիք:

մով ծածկված ցելահողերը հաճախ հանդիսանում են խոռի միակ աղբյուր կամ ծառայում են վորպես արտավայր:

Առաջին տարին ցելատեղում սովորաբար փարթամ աճում են դաշտային մոլախոտերը, առավելապես՝ միամյաները, վոր առանձնապես չեն նեղութմ կուլտուրական բույսերի կողմից: Առաջին տարվա ցելատեղերում առանձնապես տարածված են՝ *Avena fatua* L., *Lolium temulentum* L., *Lolium persicum* Boiss. et Hoh., *Brassica campestris* L., *Galium Aparine* L., *Gypsophila elegans* MB., *Polygonum patulum* MB.

Հետևած տարին միամյաներն յուրին պլանն են անցնում և գերակշռություն են ստանում բազմամյաները՝ *Cirsium incanum* Fisch., *Agropyrum repens* P. B., *Convolvulus arvensis* L., այնուհետև — տարեկը պայմաններում, զանազան արագությամբ սկսվում ե ճահճակալումն ու ցելատեղն աստիճանաբար գրավում ե մարգագետնային ու տափաստանային բուսականությունը:

Ցելատեղերում ամենից հաճախ պատահում են ու ամենից շատ տարածված են *Avena fatua* L. և *Lolium temulentum* L. Այսպիսի ցելատեղն հաճախ վարսակի դաշտի տպավորություն ե թողնում — այն աստիճան ծածկված ե լինում խիտ, փռված, յերեսն գրեթե մաքուր խրիուկ մոլախոտով:

Այդպիսի ցելատեղերն ողագործվում են վորպես խոռհարքներ և, ժամանակին քաղվելու գեղքում, տալիս են հրաշալի անսանակեր, վոր իր հատկություններով հետ չի մնում վարսակի խոռից: Բայց հաճախ քաղն ուշացնում են և ստացվում ե ծղոտոտ, կոշտ խոռ, խկ խրփուկի սերմերն մեծ քանակությամբ թափվում են հողի մեջ ու այստեղ կազմում անսպառ պաշար, վորը վարակում ե հետագա մշակութները: Նույնը կարելի յե ասել և *Lolium temulentum*-ի մասին: Հաճախ սկզբի տարիներին վորջ ցելատեղը բռնում ե թափու վիկի (մօխնատ վիկ) — *Vicia villosa* համատարած ծածկոցը:

Ցելուսներում մոլախոտերի զարգացման հետեւյալ շրջանը նույնպես լավ արտահայտված ե: Բազմամյա, բարձր մոլախոտերն համատարած ծածկում են ցելատեղը, կազմելով խիտ թփուտներ: Հաճախ մի տեսակը խիստ գերազանցում է մյուսներին: 1930 թվին Սարչապետի ու Պրեկուլի մեջ ընկած գրեթե բոլոր ցելատեղերը համատարած ծածկված են առավելագույն կազմությամբ: Առիշտ ցելահողեր ծածկվում են փշափոր բարդածաղիկներով (սլոյնութեամա) — *Cirsium*-ի և *Carduus*-ի տեսակներով: Երջանի արևելքան մասում պատահում են լուրահատուկ ցելատեղեր (կալինինոյից արևելք) *Hesperis matronalis*-ի համատարած թփուտներով: Հասարակ սեղով (լուրե) *Agropyrum repens* P. B. ծածկված ցելատեղեր նույնպես հազվադեպ չեն: Զարգացման այս շրջանում, վերջին տարիներում ցելատեղերն հաճախ քաղվում են սիլոսի համար:

Հետեւյալ շրջանում, ճահճակալման սկզբներում, հաճախ նկատվում է ալսպես կոչված «թիթեռնածաղկավին ցելուտների» (бобовые перелоги) յերեան գալը:

Ալոպեկես, Նիկորայելիկա գլուզի և նրանից հարավ ընկած գյուղերի ցելաւողերը ծածկված են մի բուսականությամբ, վորի մեջ խիստ գերակշռություն ունի *Trifolium pratense* L., *Trifolium repens* L., *Trifolium ambiguum* M. B. տեսակի յերեքնուկները: Լոռվա խորհունակեսության ցելաւողերում նկատվում եր յեղջերառվույտի (լաճառեց) *Lotus ciliatus* C. Koch. խիստ տարածում:

Ցելաւողը վորպես արոտավայր յերկար ոգտագործելու դեպքում, մուսուսային շրջանը տեսում է յերկար: Անսառւններն ուտում են սովորաբար ավելի նուրբ խտակրի ծիլերն ու չեն մտահնում ազատ սերմաթափվող մուսուսերին: Ալոպեկես, Կալինինո գյուղից դեպի արևմուտք ընկած ցելաւողերի մեծ տարածություններ յերկար ժամանակ մնում են մոլախոսային շրջանում: Այդ մոլախոսակերն աստիճանաբար փոխարինում են մարգադեանային *Cirsium Cosmelii* Fisch. մոլախոտը, վոր գրավում ե մեծ տարածություններ: Խոտհարքային ոգտագործման դեպքում ձմակալումը տեղի է ունենում ավելի արագ, բայց մոլախոսային սերմերի պաշարը, վոր կուտակվել եր հողի մեջ սկզբի տարիներում, յերկար տարիներ պահպանում ե իր կենսունակությունը: Ստեփանավանի շրջանում հայտնի յեն դեպքեր, յերբ շատ հին ցելուտաններ, վոր գրեթե չեցին տարրերգում հարոսի խամբից, վարելուց հետո ինչ-ինչ պատճառներով չցանելու դեպքում, հենց առաջին տարիներն իսկ համատարած ծածկվում եյին խրփուկով ու վորոմով:

ՄՈՒԾԱՌԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ:

Վերհում բերված զանազան կուլտուրանների մոլախոտերով վարակման նկարագրությունը ցույց է տալիս, վոր շատ մոլախոտեր ընտելացած են հատկապես վորոշ կուլտուրանների: Խսկապես, յեթե քննելու լինենք մոլախոտերի գասավորումն ըստ առանձին կուլտուրանների, ապա կարելի յեւ՝ հենց թեկուղ հատկների վարակման աստիճանից դատելով, — նկատել, վոր, մինչդեռ վորոշ մոլախոտեր համեմատաբար միատեսակ վարակում են բուլը տեսակի կուլտուրանները, (*Galium aparine*, *Polygonum Convolvulus*), մյուսները խիստ կերպով գերակշռում են վորոշ կուլտուրանների մեջ, ըստ սմին այս առանձնահատկացած (специализованные) մոլախոտերն ավելի տառատ են լինում ու ավելի վնասակար:

Աշնանացան դաշտերի մոլախոտերը. — Աշնանացանների համար („սորժա“) խիստ առանձնահատուկ են վիճը, բացի ցանովիից, և արջնդեղը:

Թավոտ և պանոնային վիճը (вика мохнатая и паннонская) աշնանացանների առանձնահատուկ մոլախոտերը, գարնանացանների համար նույնքան առանձնահատուկ խրփուկի ու վորոմի (овсяцюром и пшеницей хлебом) հետ միասին, Ստեփանավանի շրջանի դաշտերի համար հանդիսանում են անկատած ամենաառատ ու ամենավնասակար մոլախոտերը:

Հուլիս ամսին շրջելով դաշտերը, գրեթե լուրաքանչյուր գլուղի մոտ հեռվից կարելի յեւ տարբերել աշնանացան դաշտերը գարնանացանից՝ նրանց մեջ տարածված մեծ-մեծ բաց-կապտագույն թերով—թավոտ վիկի ոջախներով, մինչդեռ գարնանացանների մեջ այդ մոլախուր հանգիպում և հատ-հատ: Թավոտ վիկի պատճառած վնասը դաշտերին ավելի խիստ է: Թավոտ վիկի ցողուններն հասնում են լեռքեմն 2 մետր յերկարության ու խիստ ճշուղավոր են. մի արմատից յերբեմն դուրս են դաշիս մի քանի տասնյակ ցողուններ: Այդպիսով, մի թուփը կարող է փաթթվել հացանատկին ու պատկեցնել նրան հողի մի քանի քառակուսի մետր տարածության վրա:

Այն վայրերում, ուր ցանքի մեջ համեմատաբար առատ է վիկի, անհնար և ցողունների հաշվասումը քառակուսի մեարի վրա, վորովհետեւ ահագին թիունները խճճում են իրար ու իրանք ել պառկում են հողին, ծածկելով միմիանց շաճախ այդպիսի տեղերում հացանատիկ գրեթե բուլորովին չի լինում: Նրա տերեկներն ու ցողուններն ել ինչպես և ստորին շերտում գտնվող մյուս մոլախուրը, ճնշված վիկի թիերով, բուլորովին չորանում են ու մեռնում: Թավոտ վիկի միջին մեծության մի ցողունի կործանաբար աղբեցությունը ցանքսի վրա անհամեմատ ավելի շատ է, քան մյուս մոլախուրի մի ցողունինը, վիկի ցողունների մեծության ու բոնած սերմերի հսկայական քանակության հետևանքով: Այդ պատճառով ել վիկի ցողունների սակավության գեղքումն ել նրա պատճառած վնասը ցանքին շատ անգամ ավելի կործանաբար է, քան մյուս մոլախուրինը, թեկուզ նրանց ցողունները քանակով ավելի շատ լինեն:

Աշնանացան հատիկների մեջ ել վիկի սերմերը առաջին տեղերից մեեկն են գրավում՝ մյուս մոլախուրերի համեմատությամբ: Հատիկների վարակման աստիճանն այդ լերկու տեսակ վիկի սերմերով կարող է շատ բարձր լինել: Գարնանացան հատիկների մեջ պահնոնայի ու թավոտ վիկի սերմեր պատճառում են անհան քանակությամբ—միջին հաշվով 40—50 անգամ ավելի քիչ, քան աշնանացանի մեջ:

Թավոտ վիկի ավելի շատ պատղառու յեւ, քան պահնոնայի վիկի, և չնայած վոր առաջինը շրջանում ամենուրեք տարածված է, սակայն հատիկներն ավելի քիչ են վարակված թավոտ վիկի սերմերով, քան պահնոնայի սերմերով: Դա բացարձությունը են սերմերի զգալի մասը թափվում և գևատին, իսկ հատիկների մեջ ընկնում են միայն ու հասունացող սերմերը: Այս ըանն առանձնապես նկատելի յեւ բարձրակու ցանքերում, Պահնոնայի վիկի ծաղկում է ավելի միահամուռ և սերմերի մեծ մասն հասնում է հացի բերքահավաքի ժամանակ: Նրա սերմերի ավելի քիչ տոկոսն է թափվում գետին, քան թավոտ վիկինը և հենց զրանով ել բացարձությունը և հատիկների առանձնապես խիստ վարակված լինելը պահնոնայի վիկի սերմերով:

Գարնանացաններում, բացառությամբ լեջան, Ագարակ և Յաղգան զյուղերի լեռնային շերտի ցանքերի, ուր, ինչպես վերեւում ասցինք, առատ է ըստ յերեսույթին թավոտ վիկի առանձին մի տեսակը, — թավոտ ու պահնոնայի վիկ պատճառում են քիչ և սովորաբար բերքահավաքին գրեթե

չեն հասնում, հատիկների մեջ ընկնում են մեծ մասամբ նրանց նվազ ու չհասած սերմերը:

Թավոտ և պանոնալի վիկը հրաշալի կերպույտ եւ թավոտ վիկը վաղոց հաւանի յի կուլտուրայի մեջ, իսկ պանոնալի ինքնուրուցն կերպով մտել ե կուլտուրայի մեջ վրաստանում՝ Ախալքալաքի շրջանի գյուղերի կողմից (11): Հատիկի տականքը (օտքած)՝ (խարձը), զոր պարունակում ե իր մեջ մեծ քանակությամբ այդ վիկերի սերմերից, կարող ե ծառայել վորպես արժեքավոր նյութ՝ կերպին կուլտուրաների համար: Պանոնալի ու թավոտ վիկի սերմերի միաժամանակ աճման շնորհիվ նրանց մշակույթը կերի համար չի վտանգում հողը մոլախոտերի վարակումով (մեր փորձերը (10) Վրաստանում՝ Սագուրամայում և պրոֆ. Մ. Գ. Թումանյանի փորձերը (14) Յերեանում):

Գարն անացան դաշտերի մոլախութերը. — Գարնանացան գաշտերի համար նույնական պատուհաս և հանդիսանալում խրիուկը, — Avena fatua L. Խնչպիսի պատուհաս և վիկը՝ աշխանացանների համար: Իր վնասակարությամբ նրանից գրեթե յետ չի մնում վորոնը — *Lolium temulentum* L.: Ավելի քիչ չափով ե վնասակար գարնանացանների համար սպիցի-ֆիկ ցանովի վիկը — *Vicia sativa* L. և խաչածաղկավորներից յերկուսը — *Brassica Sinapistrum* Boiss. (գաշտացին մանանեն) և *Brassica campestris*. (ըռակ):

Խըփուկ—(օօցիօր) — Avena fatua L. — Վողջ չայաստանում հանդիսանում և ամենավնասակար ու չարաբասան մոլախութը գարնանացան ցանքերի համար, և Սահիփանավանի շրջանում նկատվող նրա տարածման պատկերը բնավ բացառություն չի կազմում: Գարնանացանների մեջ խրիուկից ամենից շատ տուժում են վարսակի դաշտերը, ապա հաճարը և գարին: Գարնանացան ցորենը համեմատաբար ավելի քիչ ե վարսակած խրիուկով, քան գարնանացան մլուս կուլտուրաները, Գարնանացան ցորենի նվազ վարակումը խրիուկով չի կարող բացատրվել նրա տեղով՝ ցանքափոխության մեջ, կամ հողի մշակման բնույթով: Մեր հետազոտության ավանդությունը, գարնանացան ցորենին նախորդողները միանգամայն բազմազան են — սկսած խամից և վերջացրած գարնանացանով (ցորեն-ցորենի վրա կամ գարու վրա), ընդ վորում որինաչափություն սահմանել վարակվածության աստիճանի նկատմամբ, նախորդողների կապակցությամբ, մեր հետազոտած գեղպերի հիման վրա՝ չի կարելի Այսուեղ պատճառները կարող են լինել զանազան առաջին՝ գարնանացան ցորենի ուշ բերքահավաքը, մինչև իսկ խրիուկի առատության գեղքում, տալիս ե հատիկի նվազ վարակվածություն, ընդ վորում գրեթե վողջ խրիուկը թափում և արդեն հողի մեջ: Յերկրորդ՝ յեղ այս հաստատված ե հետազոտությամբ ու հարցումներով, — վոչ մի մշակույթ այնպես ինամբով չի քաղանացում ձեռքով, խնչպես գարնանացան ցորենը, Համեմատաբար ուշ հասկավորվող վորոնը (ույնեալ չլեց) քաղհանելու գեղքում՝ զգալի չափով մնում է, իսկ խրիուկը պոկվում և ավելի հաջող կերպով:

հեշտ ե, քան մյուս կուլտուրաները, և դրա համար ել խրփուկի փոխանցումը ցանքի հատիկի միջոցով այստեղ այնքան ել հնարավոր չեւ:

Հաճախ խրփուկն այն աստիճանն ինդղում ե ցանքսը, վոր կուլտուրական բույսը բոլորովին ծածկվում ե խրփուկի մասսայի տակ: Խրփուկի գերակշռութիւն իր խեղդուած ցանքսէրում 1930 թվին նկատելի յեր վեց զյուղերի գաշտերում, իսկ 3 բալի հասնող առատության գարու, վարսակի ու հաճարի մեջ՝ շատ հաճախ: Խրփուկի գաշտերը խոտի կամ կանաչ կերի համար քաղելլը կատարվում ե սովորաբար այն ժամանակ, յերբ հայը կատարելապես խեղդված ե լինում: Իսկ յեթե հացարուկսը քիչ քանակություն կազմելով հանգերձ այնուամենայնիվ նկատելի չե, կատարում են բերքահավաքը հացարույսի հատիկ ստանալու համար, ըստ վորում խըրփուկն հատիկի մեջ ընկնում ե համեմատաբար քիչ քանակությամբ և զտվում ե նրանից հեշտությամբ: Չի կարելի չնկատել վոր խրփուկով խիստ վարակված գաշտերի ողափորձման այդպիսի յեղանակը անհամեմատ ավելի նպաստում ե նրա հետազոտարածմանը, հողը համատարած նրա սերմերով վարակված լինելու պատճառով:

Աշնանացաններում խրփուկը տարածված ե շատ անհամաչափ: Այն ժամանակ, յերբ վորոշ գաշտերում բոլորովին չկա, մյուս գաշտերում լավ նկատելի յե նրա խառնուրդը: Առանձին, թեև քիչ, գեպերում (Պրիվոյինի զյուղ) խրփուկն աշնանացան դաշտերում նույն իսկ առաջին տեղըն ե բռնում մյուս մոլախտերի մեջ: Բայց յերեսույթին այստեղ նշանակություն ունի վերջին մշակման ու ցանքի ժամանակը:

Կան արգովոր Ստեփանավանի շրջանում աշնանից բուտնող խրփուկի տեսակներ, ինչպես այդ հաստատված ե Անդրկովկասի մի քանի ցածրադիր շրջանների համար,—դիտողությունների պակասության պատճառով այդ առայժմ չենք կարող ասել: Աշնանացանների հատիկի մեջ խրփուկը գրեթե բոլորովին չի ընկնում, և ամբողջապես կամ գրեթե ամբողջապես հասնում ե մինչև բերքահավաքն ու թափում հողի մեջ:

Խեղդելով ու վտարելով կուլտուրական բույսերին, հողից խլելով հսկայական քանակությամբ սննդարաբ նյութեր ու գուրբշացներով ջուրն ավելի առատ, քան կուլտուրական բույսեր, —խրփուկը հսկայական վնաս ե հասցնում Ստեփանավանի շրջանի հողագործությանը: Նկատի առնելով Ստեփանավանի շրջանում գարնանացան ցանքի գերակշռումը՝ աշնանացանի համեմատությամբ, մասնավոնդ վերջին տարիներում, պետք ե ընդունել վոր շրջանային մասշտաբով, խրփուկի առաջացրած վնասն զգալի չափով գերազանցում ե վիկի մոլախտային տեսակների առաջացրած վնասին:

Վորպես խոտ կամ կանաչակեր ողափործելիս, խրփուկը տալիս ե սննդարաբ ու անսաստների կողմից ախորժակով ուղղվող կեր, յեթե միայն վաղ ե քաղվում, իսկ ուշ քաղվելու դեպքում խիստ կոշտանում ե ու ծղոտանում, և նրա բրդոտ հատիկներն ու նրանց վշտու, սուր ծալրերը ուտելիս անսաստներին վնասում են: Խրփուկով լցված գաշտերն ու խրփուկային ցեղունները վաղ քաղելլ՝ այդ մոլախտի դեմ սիստեմատիկ պայքար մղելու անհրաժեշտ պայմաններից մեկն ե և միաժամանակ տալիս ե լավ ու սննդարաբակեր:

Խոսելով խրփուկի մասին, չե կարելի չհիշատակել մոլախոտային—գաշտային վարսակը, վորն Ստեփանավանի շրջանում վարակում և դարնանացանները, առավելապես հաճարն ու դաբրին: Գարու գաշտերում, նրանց վարակող վարսակի մի մասն անշուշտ պատահական և կամ նրա կուլտուրական տեսակների խառնուրդի իսկ հաճարի մեջ—վարսակի վողջ խառնուրդն ըստ յերեսոյթին պատկանում և նրա գաշտամոլախոտային տեսակին: Մոլախոտային վարսակն ավելի քիչ և տարածված շրջանում, քան խրփուկը: Նրա տարածման աստիճանը յերբեք չի համարում 4 բալի և միայն հագվագեպ և 3 բալի (հաճարի մեջ): Նրա սերմերի թույլ շաղ գալը (հողին թափվելը) արգելվ և հանդիսանում հողի վարակվելուն նրա սերմերով, սակայն, զրա հակառակ, հնարավորություն և սեղծում նրանց՝ մեծ մասամբ հատիկի մեջ թափվելու: Այդ պատճառով ել գարնանացան կուլտուրաների հատիկների վարակումը մոլախոտային վարսակով, Ստեփանավանի շրջանում, ընդհանուր առմամբ, մեծ և և նույնիսկ միջին հաշվով մի փոքր գերազանցում և հատիկների վարակմանը խրփուկով, սակայն առանց նրա պես համաշափ տարածվելու:

Վ. Բ. Ռ. Ո. Պ. (ույսի չեց) — *Lolium temulentum* L.—Նույնպես հանդիսանում և իստու սպեցիֆիկ (առանձնահատուկ) գարնան ցանքերի համար, վորոնցից առանձնապես իստու վարակում և ցորենը: Այստեղ նրա տարածման աստիճանը դաշտերում հաճախ համարում և 3 և նույն իսկ 4 բալի, իսկ գարնանը նրա սերմերի տոկոսը հացահատիկի մեջ յերեխն հասնում և հակայական չափերի—20—22 տոկոսի, մի անգամ նույն իսկ 29,7 տոկոսի (Ստեփանեա), իսկ յեթե սրան միացնենք և *Lolium persicum*-ի սերմերը, ապա հատիկների առավելացույն վարակումը վորոնիներով կկազմի մի անհելի թիվ—33 տոկոս: Աշնանացան ցանքերում *L. temulentum*-ը պահելի քիչ և պատահում, իսկ տեղ-տեղ ել բոլորովին չկա:

Ստեփանավանի շրջանը Հայաստանի համեմատաբար այն սակավաթիվ վայերից մեկն և վորտեղ առատ կերպով տարածված և վորոնցը իշան նազառառում են զարնան ու ամառվա սկզբների բավական առատ մթնոլորտային տեղութերը: Հացի մեջ նրա խառնուրդից հիվանդանալու դեպքերն այստեղ հազվագեղ չեն: Յեվ գա միանգամայն հասկանալի յե, յերբ հացահատիկն իր մեջ պարունակում և այնպիսի հակայական քանակությամբ փորում: Յեթե, ինչպես այդ ցույց ե տրված հետադարձում, նույն իսկ արիյերով գտելուց հետո յերեխն հատիկի մեջ մնում և *L. temulentum*—մի քանի քաշի տոկոս, ապա պարզ ե, վոր միանգամայն հնարավոր և թունավորումը: Ինչպես մատնանշում ե կ. վ. կամ ենոնկին (4) *L. temulentum*-ի 30 գրամից ավելին վտանգավոր և մարդու համար, յերբ ներս ընդունի: Նշանակում և 3 տոկոս *L. temulentum* պարունակող մեկ կիլոգրամ հացահատիկն հանդիսանում և անզայման թունավոր դոզա և հետևապես միջին որակահիկ հացը, թխված 3—4 տոկոս *L. temulentum*-ով վարակված հացահատիկից, կարող ե թունավորում պատճառել: Իսկ պարբենահատիկի այդ աստիճան վարակումն Ստեփանավանի շրջանում միանգամայն հնարավոր ե, նկատի առնելով *L. temulentum*-ի այն քանակը ցանքերում, վոր նկատելի յեր 1930 թվին:

L. temulentum-ի տարածումը, տեղական բնակիչների վկայությամբ, տարեց տարի տատանվում է, առանձնապես ուժեղանալով խիստ խննավ գարուն ունեցող տարիներին։ *L. temulentum*-ի քիչ թափվող և համեմատաբար ուշ հասնող սերմերը մեծ մասամբ ընկնում են հատիկի մեջ, թեև ցերուտներում յեղած վորոմը վկայում է, վոր այդ սերմերը մասամբ թափում են նաև հողի մեջ։

Lolium temulentum L.—Ստեփանմալամի շրջանում, ինչպես ցուց ե տրված վերևում, հայտնի յե իր յերկու տեսակով—քիստավոր ու անքիստ—var. *muticum* Boiss. (=*L. arvense* Bab., *L. speciosum*), ընդ վորում յերկու տեսակն ել, առանձնապես անքիստը (12), իր շերտավորման մեծությամբ ու պտղի չափով այնքան մուտենում ե մանրահաս ցորենին, վոր հացահատիկը դրանցից կատարելապես մաքրելով չափազանց դժվար եւ

ծնորհիվ իր խիստ տարածման ու առատ կերպով հացահատիկի մեջ թափվելուն *L. temulentum*-ը Առեփանմալամի շրջանում հանդիսանում է բոլոր մոլախոտերից ամենախիստ վարակողը։

Վորոմին — *L. temulentum* — գարնանացան կուլտուրաներում գրեթե միշտ ուղեկցում է, թեև ավելի փոքր քանակությամբ, պարսկական վորոմը — *Lolium persicum* Boiss. et Hoh., վոր առանձնապես առատ և գարու և վարակի մեջ։ Պարսկական վորոմի թունավոր լինելու մասին գրականության մեջ ճիշտ տվյալներ չկան։ Այդ մասին նման տեղեկություններ չի կարելի ստանալ և բնակչությունից, վորը չի ջոկում նրան քիստակոր տեսակից — *L. temulentum*.

Ցանովի վիկ (Վիկա ոսեանա) — *Vicia sativa* L. : Հակառակ վիկի ցեղի մյուս տեսակներին, հանդիսանում է սպեցիֆիկ (առանձնահատուկ) վարակող գարնանացան կուլտուրաների։ Գրեթե հավասարաշափ վարակելավ գարին ու գարնանացան ցորենը, նաև միշտ ել պատահում ե դրանց հատիկների մեջ, հաճախ կազմելով վողջ քաշի 4—6 տոկոսը, իսկ առավելագույն գեպքում՝ 14,4 տոկոսը (Ղղլքիլսա գյուղի գարին)։ Համեմատաբար ցածր հասակով, թուլլ ճյուղավորությամբ ցանովի վիկն ավելի քիչ ե պատճառ զանում հացարույսի պատկելուն ու միաժամանակ ավելի քիչ պտղատու յե, քան թափու և նույն իսկ պանոնայի վիկը։ Սերմերն հատիկի մեջ թափվում են ավելի մեծ տոկոսով, քան թափու վիկի սերմերը, դրանով ել բացատրվում ե նրա համեմատաբար մեծ քանակությունը հատիկի մեջ։

Դաշտացին մանանեխ (полевая горчица) — *Brassica Sinapistrum* Boiss. և *Brassica campestris* L.—Նույնպես կերպով ստանձնահատուկ (սպեցիֆիկ) չեն, ինչպես նախորդ մոլախոտերը։ Տարածված են Ստեփանավանի շրջանում բավական առատ, և հաճախ գարնանն ու ամառվա սկզբներին դաշտերը համաստարած դեղին գույն են ստանում դրանց ծաղկեներից։ Ծնորհիվ իրենց վաղ ու յերկարատև ծաղկափթթության, *Brassica*-ի տեսակներն իրենց սերմի մեծագույն մասը, ինչպես վերեր մատնանշված ե, թափում են հողի մեջ ու քիչ մասը միայն ընկնում ե հատիկի մեջ, սակայն շնորհիվ նրանց առատության ու սերմերի չափազանց

մեծ պտղատվության, նրանց սերմերի քանակն հողի մեջ ալնուամենալիք մեծ է:

Իրենց լայն տերևներով խիստ գոլորշիացնելով հողի խոնավությունն ու սննդաբար նյութերը խլելով կուլտուրական բույսից, Brassica-ի տեսակները վնաս են հասցնում նաև նրանով, վոր, թեև վիկերի նման փաթաթվող բույսեր չեն, այնուամենայնիվ պատճառ են գառնում հացարույսի պառկելուն. վերջինը հաստատվում ե դաշտերում կատարած մեր բազմաթիվ դիտողություններով: Ծաղկաթափ լինելուց հետո այս մոլախոտերի բացված ճյուղավոր ցողունները խիստ կոշտանում են և քամու հոսանքից տատանվող կուլտուրական բույսի ցողունները լեռբեմն խիվելով այդ մոլախոտերի կոշտ ու պինդ ցողուններին, ջարդվում են կամ քամուց կոանալով ընկնում են նրանց պինդ ճյուղերի արանքն ու ալիս չեն կարողանում բարձրանալ, ուղղվել: Յերբեմն կարելի էն նկատել գարու կամ ցորենի ցողունների ամբողջ շարքեր խճճած Brassica-ի տեսակների ցողունների մեջ: Վատ քաղցանի գեպքում նրանք խիստ վարակում են նաև շարքաներկ (միջարքային) կուլտուրանները (կարտոֆիլ):

Ինչպես աշնանացանների, այնպես ել գարնանացանների մեջ շատ թիչ հավասարաչափ աճող մոլախոտերից պետք ե հիշատակել կպչուն կաթնախոտը (լցուկի պարագաների լեռնային ցրջաններում փոխարինում ե ցածրադիր գոտում շատ ապածված Galium tricorne With.-ին: Շատ նման ե նրան և վնասում ե ցանքերին նույն ուղղութիւններում: Նրա կոչուն ճյուղերը, թեպետ և զուրկ են բեկիններից, վորպիսիք ունի վիկը, բայց այնուամենայնիվ իրենց մանր կեռիկներով (կրիուչեկами) կոչելով հացարույսի մատղաշ ցողուններին, պառկեցնում են նրան ու ալգիսիսվ խեղդում, Կաթնախոտը վաղ ե աճում. նրա ցողուններն սկզբում փուլում են գետնին, իսկ հետո, հենվելով հացարույսի աճող ցողունին, բարձրանում են նրա հետ միասին: Քամու ժամանակ կաթնախոտի ցողունները հացարույսի հետ միասին ընկնում են գետին ու արգելք են հանդիսանում նրանց կրկին բարձրանալուն:

Կաթնախոտի ծաղկման շրջանը շատ լերկարատե ե: Նրա առաջին պտուղները—ստորին հանգույցներից—շատ խոշոր են, թափվում են հողի մեջ և միայն ամենավերջինները, սովորաբար ավելի մանրերն ընկնում են հատիկի մեջ: Այդ պատճառով ել կաթնախոտը թեև խիստ տարածված ե, բայց համեմատարար քիչ ե վարակում հատիկները:

Դաշտային պատառուկ (βειονοκ πολεβοῖ) Convolvulus arvensis L.—Շատ խիստ տարածված լինելով Ստեփանավանի շրջանում, վարակում ե գրեթե բոլոր ցանքերը: Առաջ լինելով ցորենի դաշտերում, նա վարակում ե միաժամանակ և շարքաներդ կուլտուրանները—արևածաղիկը, կարտոֆիլը: Կարտոֆիլի ու արևածաղիկի շարքերի միջև նրա ընձլուղներն իերեմն համատարած ծածկում են հողի վողջ մակերեսը (նովո-Միխայլիկա, Ստեփանավան):

ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ:

Ինչպես կարելի յե տեսնել վերև բերված նկարագրություններից, նույնական և սրան կցվող աղյուսակներից ու քարտեզներից, Ստեփանավանի շրջանում 1930 թվին կատարված հետազոտությամբ հայտաբերված են մոլախոտերի հետեւալ գլխավոր ողախները:

Վեկերն այդ տարին ավելի խիստ վնասել եյին հյուսիսում, Շահնաղար և շրջակա գյուղերի դաշտերին, դեպի հարավ մինչև Նովո-Միխայլովկա և գեղեցիկ արևելք՝ մինչև Ղղլքիլիսա, նույնպես և շրջանի հարավային ու հարավարելյան մասում—Գյառոգյառ—Գյուղագարակ-Կուրթան գյուղերի դաշտերին: Շրջանի միջին մասը մի փոքր ավելի քիչ եր վարակված վիկերով: Արջնդեղն (Կյոկոլ), ինչպես ասված ե վերենում, հարավածել եր բացառապես շրջանի հյուսիսային մասի Շահնաղարի շրջակայքը, Նորաշենի ու մերձակա գյուղերի դաշտերն, աննշան տարածությամբ: Այս մոլախոտի այլպիսի սահմանափակ տարածումը, վոր հատուկ և Անդրկովկասի համեմատարար ցածրագիր գոտիներին, բացատրվում ե, ըստ յերեսույթին, տեղական աշխանացան նյութի (մատերիալի) ծագումով:

Վորոմը, վոր բավական տարածված ե ամենուրեիք, առավելագույն չափերի եր հասնում հյուսիսարենելքում, Ղղլքիլիսա—Սարշապետ—Փոքր-Ղարաբիլիսա գյուղերի դաշտերում:

Խրփուկը, վողջ շրջանի պատուհասը, տարածման բարձրագույն աստիճանի յե հասնում հյուսիս-արևելքում, Նորաշեն—Սարչապետ—Պրիվոլնի գյուղերի գծով և շրջանի կենտրոնում—Ստեփանավանի և Նիկոլայեվկայի շրջակայքում: Պետք ե նշել նաև խրփուկի յուրահատուկ տեսակների և թափու վիկի առանձին ողախները լիռնային գոտում՝ Լեջան—Յաղղան ու հարեան գյուղերի դաշտերում:

Ալոպիսով համեմատարար ավելի վարակված են և շտապ ու լեռանդուն միջոցառութիւնների կարիք ունեն շրջանի հյուսիսային և հյուսիսարենելյան մասերը: Բացի այդ, շրջանի հարավ-արևելյան մասում նկատվում ե աշխանացանների չափազանց խիստ վարակում վիկով: Ամենաքիչ վարակված շրջանի կենտրոնական մասն ե, բայց այստեղ ել տեղ-տեղ խըրփուկ համատարած խեղում ե գարնանացանները:

Խոսելով միայն շրջանի վորոշ մասերում տեղական նշանակություն ունեցող մոլախոտերի մասին, չի կարելի չնիշատակել և կիսապարագիտ Rhynchoscoryx orientalis Bnth., վոր տարածված ե շրջանի արևելյան մասում Սարչապետ գյուղից մինչև Պրիվոլնի գյուղն ու մի փոքր հարավ վերջինից, նույնպես և ծայր հարավում, Գյառոլապից հարավ: Այստեղ մի քանի դաշտեր համատարած վարակված են այդ մոլախոտով: ուրիշ վաշ մի տեղ նա շատ տարածված չե: Այդ մոլախոտն այստեղի դաշտերն անցել ե, հավանաբար շրջակա անտառային մարդագետիններից, վորտեղ նույնպես շատ կա դրանից և արագ կերպով գարձել ե վնասակար մոլախոտ: Վորպես կիսապարագիտ նա աքլորուկի (պօրեմկա—Alectorolophus) և լորցորենի (մարտականի)

ԱԱՀԱԿ—*Melampyrum*) նման վնասակար և նըանով, վոր ծծվելով հացաբուլիքի արմատներին, ցածրացնում և նրա աճը և թուլացնում զարգացումը:

Ամեն տեղ, ուր *Rhynchocoris* շատ կա, հայաբույսի ցողունները բարձր չեն ու հասկերը խիստ մանր են:

Մի ուրիշ կիսապարագիտ՝ աքլորուկը (պօրեմկա—*Alectorolophus major* Rechb.) նույնպես պատահում և դաշտերում տեղ-տեղ, առավելապես շրջանի նույն մասում, անցնելով մարգագետիններից, սակայն հաղիկ և պատահում վոր տարածումն համանի Յ բալի. Սա պատկանում և վոչ թե հատուկ մոլախոտալիքն տեսակին, այլ սովորական մարգագետնային տեսակն է, թնավը սերմերով կորցորենները (մարելանիկա—*Melampyrum arvense* L. և *M. caucasicum* Bge) ուրիշ շատ շրջաններում առատ են, սակայն Ստեփանավանի շրջանում մենք չհայտարերեցինք նրանց:

**ՄՈՂԱԽՈՏԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԾԾ ՎԵՆԱՐԻ ԶԱՓՆ ՍՏԵՓԱՆՆԱՎԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ
ԵԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԵՌԱՆԿԱԲՆԵՐԸ:**

Ամփոփելով բոլոր վերեւում ասվածները, առանց չափաղանցության կառելի յել ընդունել, վոր մոլախոտերը Ստեփանավանի շրջանի հողագործության համար հանդիսանում են իսկական պատուհաս: Նրանց հասցրած վնասը մեծ ե ու բազմազան: Մոլախոտերի տեսակավոր կազմի մեծամասնությունը, ինչպես վերևու ցույց ե տրված, պատկանում և վոչ թե սեգետալ մոլախոտերին, այլ պատահականների—մարգագետնայիններին, տափաստանայիններին և մասամբ անտառայիններին: Սակայն շրջանի հենց այդ քիչ հատուկ սեգետալ մոլախոտերը շատ անգամ ավելի մեծ վնաս են հասցնում, քան մեացած բոլորը: Նկատի առնելով գլխավոր ու համեմատարար ավելի տարածված մոլախոտերը, Ստեփանավանի շրջանի զաշտերի մոլախոտությունը, լ. ի. կազ ակ ե վիչի (3) մոլախոտության տիպերի կարգագործան (կասիֆիկացիայի) համաձայն, պետք ե գասկը «հատուկ» կամ «անշափահաս» տիպին և մի քանի գտշտեր միայն, առանձնապես խրիուկով խիստ գարակվածները—«արմատաշաղ» („կօրհեօտպրյուսկօվուց“ տիպ) տիպին: Շրջանի առենազլիսավոր մոլախոտերը միամյա յեն, իրենց սերմերը մասամբ հողի մեջ թափող, մասամբ՝ հատիկների մեջ:

Ցերք Ստեփանավանի հատիկների մոլախոտության չափն ու բնույթը քննելու լինենք բատ մեր հետազոտած նմուշների, ապա պարզ կլինի ինչպես նրանց զգալի չափով մոլախոտությունը, այնպես ել հատիկների մեջ տարածված մոլախոտերի խիստ խալտարդետ կազմը: Հատիկի մեջ հալտարերգած են 113 տեսակ մոլախոտերի սերմեր, ալիսնքն շրջանի տեսակավոր մոլախոտերի վողջ կազմի 39,4 տոկոսը: Հատիկի ըստ առանձին նմուշների (չմաքրված արիյերով), մեկ հարյուր գրամանոց նմուշի մեջ մոլախոտային սերմերի տեսակների թիվը տատանվում է 14—44-ի միջև: Հատիկի մեջ տարածված մոլախոտի կազմի խայտարգեառությունը յերբեմն այն աստիճանի յել հասնում, վոր մի քանի գեղքերում մոլախոտային սերմերի աննշան խաւնուրդը, վոր կազմում և քաջի 3,2 տոկոսը:

